

Ընդունվել է Բանկի Վարչության 30.06.2017թ.

թիվ 27 արձանագրությամբ,

**Ընթացիկ խմբագրությունը հաստատված է
21.04.2025թ.**

Բանկի Վարչության թիվ 17 արձանագրությամբ

Ուժի մեջ է՝ 16.05.2025թ.

1. Պայմաններում կիրառվող սահմանումներ և հապավումներ

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն ֆիզիկական անձանց համալիր բանկային ծառայությունների մատուցումն իրականացնում է համաձայն սույն «Համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմաններ»-ի, որը կարգավորում է դրանց առնչվող Բանկի և Հաճախորդի միջև ծագած պայմանագրային հարաբերությունները:

Պայմաններում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն ստորև ներկայացված նշանակությունը, եթե Պայմանների տեքստով կամ բովանդակությամբ ուղղակիորեն այլ բան չի նախատեսված:

- **Բանկ** - «ԷՎՈԿԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն (հասցե՝ 0010, ք. Երևան, Հանրապետության 44/2, պետական գրանցման վկայական թիվ 0157, տրված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից, գրանցման համարը՝ 27, գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը՝ 02.10.1991թ., ՀՎՀՀ՝ 00001182):
- **Հաճախորդ** - Բանկային ծառայություններից օգտվող կամ օգտվել ցանկացող ֆիզիկական անձ, ով ակցեպտավորել է սույն Պայմաններով սահմանված հրապարակային օֆերտան:
- **Պայմաններ** - Համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմաններ:
- **Կողմ** - Բանկը կամ Հաճախորդը:
- **Կողմեր** - Բանկը և Հաճախորդը միասին:
- **Բանկի պաշտոնական կայք** - www.evoca.am ինտերնետային կայքը:
- **Բանկի գործունեության վայր** - Բանկի գլխամասային գրասենյակ և մասնաճյուղեր:
- **Ծառայության պայմաններ** - Բանկի կողմից մատուցվող ծառայություններից որևէ մեկը կարգավորող Բանկի կողմից հայտարարված առանձին պայմաններ: Եթե Բանկի կողմից մատուցվող առանձին ծառայության գծով Բանկի և Հաճախորդի միջև գործում է տվյալ Ծառայության պայմանները կամ կնքված է առանձին պայմանագիր, ապա սույն Պայմանները այդ ծառայության նկատմամբ կիրառվում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում Ծառայության պայմաններին կամ կնքված պայմանագրին: Ծառայության պայմանները Հաճախորդի համար հասանելի են դառնում Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի միջոցով: Այն կարող է փոփոխվել Բանկի կողմից միակողմանիորեն՝ այդ մասին Հաճախորդին ծանուցելով օրենքով նախատեսված ժամկետներում և կարգով, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի միջև համաձայնեցված եղանակով:
- **Սակագներ** - Սույն Պայմանների, Բանկի կողմից մատուցվող ծառայությունների պայմանների, առանձին կնքված պայմանագրերի կամ հայտ-պայմանագրերի հիման վրա Հաճախորդին մատուցվող Բանկային ծառայությունների դիմաց սահմանված վճարների, միջնորդավճարների, դրանց գանձման ձևերի ու պայմանների, առանձին ծառայությունների համար վճարվող տոկոսների չափի, ժամկետների և այլ

Ֆինանսական պայմանների վերաբերյալ համալիր տեղեկատվություն, որը հանդիսանում է սույն Պայմանների անբաժանելի մասը: Սակագները Հաճախորդի համար հասանելի են Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի միջոցով: Սակագները կարող են փոփոխվել Բանկի կողմից միակողմանիորեն՝ այդ մասին Հաճախորդին ծանուցելով օրենքով, սույն Պայմաններով նախատեսված ժամկետներում և կարգով, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի միջև համաձայնեցված եղանակով: Սակագներով նախատեսված վճարները, որպես կանոն, գանձվում են ՀՀ դրամով:

- **Հաշվարկային և դրամարկղային գործառնություններ** - Բանկային գործառնություններ, որոնք իրենցից ներկայացնում են Բանկի կողմից Հաճախորդների համար Բանկային հաշիվների վարում, դրանցով դրամական միջոցների կանխիկ և/կամ անկանխիկ մուտքագրումներ և/կամ ելքագրումներ:
- **Ձևաթուղթ** - Բանկի կողմից սահմանված համապատասխան ձևաչափով փաստաթուղթ, որի ստորագրմամբ կամ Հեռակառավարման համակարգերի միջոցով դրանց էլեկտրոնային տարբերակի ներկայացմամբ Հաճախորդը հայտնում է Բանկի կողմից առաջարկվող Բանկային ծառայություններից օգտվելու մասին իր ցանկությունը: Բանկի կողմից Ձևաթղթեր կարող են սահմանվել Հայտ/Դիմումների, հայտ-պայմանագրերի, դիմումների, պայմանագրերի համար:
- **Նույնականացուցիչ (իդենտիֆիկատոր կամ լոգին)** - Հաճախորդին առնչվող տվյալներ (անուն, տառ, թվեր, դրանց համադրություն և այլն), որոնց շնորհիվ հնարավոր է Հաճախորդին տարբերակել Բանկի այլ Հաճախորդներից:
- **Նույնականացում** - Բանկի կողմից Հաճախորդի ինքնության ստուգում վերջինիս կողմից ներկայացված նույնականացման տվյալների հիման վրա:
- **Հաճախագրում** - Բանկին ներկայացված նույնականացուցիչ պատկանելիության ստուգում, որի շնորհիվ հնարավոր է ստուգել Բանկում Հաճախորդի Բանկային հաշիվների և/կամ Ավանդների գծով գործառնությունների իրականացման և/կամ դրանց վերաբերյալ տեղեկատվության ստացման համար Հաճախորդի և/կամ վերջինիս լիազոր անձի իրավասությունը:
- **Բանկային ծառայություններ** - Բանկի կողմից առաջարկվող ծառայություններ:
- **Բանկային հաշիվ** - Բանկի կողմից Հաճախորդին առաջարկվող՝ ընթացիկ, քարտային, վարկային, առարկայազուրկ մետաղական և այլ հաշիվներ:
- **Ընթացիկ հաշիվ** - Բանկում Հաճախորդի անվամբ բացված Բանկային հաշիվ, որով իրականացվում են ընթացիկ Բանկային գործառնություններ:
- **Առարկայազուրկ մետաղական հաշիվ** - ցպահանջ հաշիվ, որը նախատեսված է անկանխիկ ոսկու հաշվառման համար, որի համար նշվում է միայն ոսկու հարգը և կշիռը և չեն նշվում այլ անհատական տվյալներ:
- **Քարտային հաշիվ** - Բանկում Հաճախորդի անվամբ բացված Բանկային հաշիվ, որում հաշվառվում են Վճարային Քարտով, այդ թվում թվային քարտով և դրա հետ կապված բոլոր գործառնությունները:
- **Ավանդ** - համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի ժամկետային ավանդներ, որոնք ընդունվում են պայմանագրով սահմանված որոշակի ժամկետի ավարտից հետո ավանդատուին վերադարձնելու պայմաններով:
- **Ավանդատու** - Հաճախորդ, ով Բանկի հետ կնքել է բանկային ավանդի պայմանագիր:
- **Վճարային Քարտ** - «ԱրՔա» (ArCa) տեղական օգտագործման քարտ, «Visa», «MasterCard» և «Union Pay» միջազգային վճարային համակարգերի վճարային քարտեր, որոնք հանդիսանում են Բանկի սեփականությունը և տրամադրվում են Հաճախորդին, նրա կողմից Բանկում բացված Քարտային հաշվով գործառնություններ կատարելու նպատակով:
- **Վճարային սահմանաչափ** - քարտով գործարքների կատարման համար սահմանված սահմանաչափ, որը կազմում է քարտային հաշվի մնացորդի և վարկային գծի, այդ թվում՝ օվերդրաֆտի հանրագումարը:

- **Թվային Վճարային Քարտ** - «Visa» և «Master Card» միջազգային վճարային համակարգի թվային վճարային քարտ է, որը Հաճախորդը օգտագործելու նպատակով ընտրել և պատվիրել է «EvocaTouch» բջջային հավելվածի կամ Բանկի պաշտոնական կայքի միջոցով՝ Բանկում բացված Քարտային հաշվով գործառնություններ կատարելու նպատակով:
- **Վճարային համակարգ** - «ArCa», «Visa», «Mastercard», «Union Pay» և այլ միջավայրերում կիրառվող ու ՀՀ օրենսդրության համաձայն այդպիսին համարվող վճարահաշվարկային համակարգեր:
- **Քոբրենդային GIFT քարտ** - Բանկի սեփականությունը հանդիսացող, Բանկի և համագործակցող իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպության լոգոտիպերի պատկերով մագնիսական ժապավենով ArCa համակարգի չվերալիցքավորվող անանուն քոբրենդային վճարային քարտ, որը գործում է բացառապես համապատասխան իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպության տարածքում/երում տեղադրված POS-տերմինալներով միայն անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով:
- **Evoca Gift Card** - Բանկի սեփականությունը հանդիսացող, Բանկի լոգոյի պատկերով մագնիսական ժապավենով ArCa և «Mastercard» համակարգի չվերալիցքավորվող անանուն վճարային քարտ, որը գործում է բացառապես V-POS և POS տերմինալներով միայն անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով, որից հնարավոր չէ լիցքավորել դրամապանակներ և կատարել բուքմեյքերական վճարումներ:
- **Քարտապան** - Բանկի ֆիզիկական անձ հաճախորդ, որին տրամադրվել է Վճարային Քարտ, այդ թվում թվային քարտ: Ընդ որում Քարտապան է հանդիսանում նաև **Evoca Gift Card-ի քարտապանը**:
- **Հեռակառավարման համակարգեր** - «EvocaTOUCH» և «EvocaOnline» ծառայությունների մատուցման Հեռակառավարման համակարգեր, որոնց միջոցով էլեկտրոնային փաստաթղթերի և հատուկ տեխնիկական միջոցների (սերտիֆիկատներ, բանալիներ և այլն) կիրառմամբ Բանկը Հաճախորդին մատուցում է Բանկային ծառայություններ, ինչպես նաև այն բոլոր ծրագրային ապահովումները կամ ծրագրային ապահովմամբ սարքավորումները, որոնց միջոցով առանց Բանկի աշխատակցի միջամտության Հաճախորդին հնարավոր է մատուցվել Բանկային ծառայություններ:
- **Վճարային տերմինալ** - Բանկի սեփականությունը հանդիսացող և վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպություններին պատկանող Ինքնասպասարկման սարքեր, որոնց միջոցով Հաճախորդները հնարավորություն ունեն իրականացնել գործարքներ (համալրել Բանկային հաշիվը, կատարել վարկերի մարումներ և այլն):
- **Բանկի տվյալների շտեմարան** - Բանկի ծրագրային ապահովումների և սարքավորումների համալիր, որում առկա Հաճախորդի տվյալները թույլ են տալիս Բանկային գործառնությունների իրականացման ժամանակ նույնականացնել և հավաստագրել Հաճախորդին:
- **Բանկի ներքին գործարքներ** - Գործարքներ, որոնք իրականացվում են Բանկի ներսում Բանկում բացված հաշիվների միջև:
- **Ինքնասպասարկման սարք** - Ավտոմատ գանձման մեքենա կամ Վճարային տերմինալ, որը նախատեսված է առանց Բանկի աշխատակցի օգնության Հաճախորդի կողմից կանխիկ դրամական միջոցների ելքագրման կամ մուտքագրման, ինչպես նաև դրամական փոխանցումներ իրականացնելու համար:
- **Հայտ/Դիմում** - Բանկի կողմից սահմանած ձևաչափով, Հաճախորդի կողմից առձեռն կամ Հեռակառավարման համակարգերի միջոցով ներկայացված հայտ, դիմում, հայտ-պայմանագիր, դիմում-պայմանագիր և այլն, որով Հաճախորդն արտահայտում է Բանկի կողմից առաջարկվող Բանկային ծառայություններից օգտվելու վերաբերյալ իր ցանկությունը, կամքը և կամահայտնությունը:
- **Հաճախորդի ստուգիչ տեղեկատվություն** - Հաճախորդի կողմից բանկային ծառայություն ստանալու Հայտում նշված տառային կամ թվային տվյալներ, որոնք գրանցվում են Բանկի տվյալների շտեմարանում:

և օգտագործվում են Հաճախորդի կողմից Բանկի Կոնտակտային կենտրոնի դիմելիս՝ Հաճախորդի նույնականացման և հավատագրման համար:

- **E-sign համակարգ** – Բանկի գործունեության վայրում տեղադրված հատուկ տեխնիկական սարքեր, որոնց միջոցով Հաճախորդի կողմից վավերացվում (կնքվում) է Բանկի կողմից առաջարկվող ծառայությունների շրջանակում կնքվող փաստաթղթերը: Ընդ որում՝ Բանկը կարող է սահմանել որոշակի ծառայությունների տեսակներ, որոնք մատուցվում և վավերացվում (կնքվում) են բացառապես E-sign համակարգ միջոցով:
- **Գործառնական օր** - աշխատանքային կամ ոչ աշխատանքային օր, երբ Բանկը մատուցում է բանկային ծառայություններ: Պայմանների իմաստով գործառնական օր է համարվում Հաճախորդի սպասարկման համար Բանկի գլխամասային գրասենյակի, մասնաճյուղերի և Կոնտակտ կենտրոնի համար սահմանված օրերն ու ժամերը: Եթե այլ բան նախատեսված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում և/կամ պայմանագրերում և այլ պայմաններ հրապարակված չեն բանկի պաշտոնական կայքում, ապա, որպես կանոն, Բանկում գործառնական օրն սկսվում է յուրաքանչյուր աշխատանքային օր Երևանի ժամանակով ժամը՝ 09:30-ին և ավարտվում 17:00-ին:
- **Աշխատանքային օր** - աշխատանքային օր է համարվում հինգօրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմում ժամը 9:00-18:00:

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1. Սույն Պայմանները հանդիսանում են հրապարակային առաջարկ (օֆերտա):
- 2.2. Հաճախորդի կողմից այն համարվում է ընդունված (ակցեպտավորված) այն պահից, երբ Հաճախորդը առձեռն կամ Հեռակառավարման համակարգերի միջոցով Բանկի կողմից սահմանված ձևանմուշով ներկայացնում է իր կողմից պատշաճ լրացված և վավերացված, Բանկային ծառայություններից օգտվելու Հայտ և/կամ Հայտ-պայմանագիր և/կամ Դիմում կամ կատարում է այնպիսի գործողություն, որն արտահայտում է Պայմաններն ընդունելու և Պայմաններով նախատեսված ծառայություններից օգտվելու իր կամքը և մտադրությունը, կամ Բանկի համար ընդունելի և տվյալ ծառայության համար սահմանված եղանակով ծառայությունից օգտվելու մասին Հաճախորդի հաստատումը ստանալու պահից:
- 2.3. Սույն Պայմանները սահմանում են Բանկի և Հաճախորդի միջև կնքվող Համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմանագրի դրույթները, Բանկի կողմից Հաճախորդին Բանկային ծառայությունների մատուցման կարգը, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի միջև իրականացվող Բանկային գործառնականությունների հետ կապված պայմանագրային հարաբերությունները:
- 2.4. Հաճախորդին մատուցվող որոշակի ծառայություններ կարող են տրամադրվել ծառայության պայմաններով կամ առանձին կնքված պայմանագրերով, կանոններով, հայտ-պայմանագրերով, համաձայնագրերով, որոնք հանդիսանում են սույն Պայմանների անբաժանելի մասը: Այն դեպքում, երբ Բանկի կողմից առանձին ծառայությունների մատուցման համար սահմանված են առանձին պայմաններ և (կամ) պայմանագրեր, դրանք գործում են ի լրումն Պայմանների:
- 2.5. ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, և Կողմերի միջև լրացուցիչ գրավոր համաձայնությամբ Պայմաններից տարբերվող դրույթներ սահմանված լինելու դեպքում դրանք ճանաչվում են գերակա:
- 2.6. Համալիր Բանկային ծառայությունների մատուցումը իրականացվում է սույն Պայմաններին, Ծառայության պայմաններին և Սակագներին համապատասխան:
- 2.7. Բանկի կողմից Հաճախորդի՝ Բանկային ծառայություններից օգտվելու համար ներկայացված Հայտի/Հայտ-պայմանագրի/Դիմումի ընդունումը (ակցեպտավորումը) նշանակում է, որ Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմանագիր, որի անբաժանելի մասն են հանդիսանում սույն Պայմանները, Սակագները և Դրույթները: Թղթային կրիչով

Հայտ/Հայտ-պայմանագիր/Դիմում ներկայացնելիս դրա ակցեպտավորումը կատարվում է Հաճախորդի օրինակի վրա՝ Բանկի կողմից այն ընդունելու մասին համապատասխան նշում կատարելով, իսկ Հեռակառավարման համակարգերի միջոցով Հայտ/Հայտ-պայմանագիր/Դիմում ներկայացնելիս՝ Հաճախորդին էլեկտրոնային տարբերակով հաղորդագրություն ուղարկելով, Հաճախորդին տվյալ ծառայությունը մատուցելով կամ այլ եղանակով:

- 2.8. Հաճախորդն ընդունում և համաձայն է, որ Բանկի և իր միջև իրավահարաբերությունները կարող են ծագել նաև էլեկտրոնային սարքերի միջոցով ստորագրության ֆաքսիմիլ վերարտադրությամբ ստորագրված Հայտի/Հայտ-պայմանագրի/Դիմումի, առանձին Պայմանագրի, առանձին դիմումի և այլ փաստաթղթերի հիման վրա (ծեռքով էլեկտրոնային սարքի վրա ստորագրելու եղանակով): Ընդ որում՝ Հաճախորդն ընդունում է, որ էլեկտրոնային սարքով կատարված ստորագրությունն ունի նույն իրավական նշանակությունը և ուժը, ինչ թղթի վրա կատարված ստորագրությունը:
- 2.9. Բանկի կողմից կարող է սահմանվել որոշակի ծառայությունների շրջանակ, որոնց մատուցումն իրականացվելու է բացառապես Հաճախորդի կողմից ծեռքով էլեկտրոնային սարքի վրա ստորագրելու եղանակով, որը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված սույն Պայմանների ընդունման ուժով:
- 2.10. Էլեկտրոնային սարքի միջոցով ստորագրված փաստաթղթերն ուղարկվում են Հաճախորդի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին և համարվում են բնօրինակ փաստաթղթեր: Ընդ որում՝ Բանկին տրամադրված էլեկտրոնային հասցեի ճիշտ, գործող կամ լիարժեք լինելու պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:
- 2.11. Հաճախորդը անվերապահորեն ընդունում և հաստատում է, որ իր տիրապետման ներքո գտնվող կամ իր էլեկտրոնային հասցեին ուղարկված փաստաթղթերի և Բանկում պահպանվող օրինակների միջև առկա անհամապատասխանության և/կամ տարբերության դեպքում, գերակայություն տրվում է Բանկում պահպանվող օրինակին:
- 2.12. Պայմանները և դրա ակցեպտավորմամբ կնքված համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմանագիրը պարտադիր է Հաճախորդի համար:
- 2.13. Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, այդ թվում էլեկտրոնային տիրույթում տրամադրվող համակարգում «Հաստատում եմ», «Համաձայն եմ», «Ընդունում եմ» և/կամ համանման համաձայնություն արտահայտող այլ կոճակների նշումով Հաճախորդը հավաստում է, որ համաձայն է և ընդունել է այն պայմանները, որոնք ներկայացված են տվյալ գործընթացի և/կամ համաձայնության ներքո: «Ընդունել և ստորագրել» կամ համանման այլ կոճակների սեղմումը, համապատասխան դաշտում «V» և/կամ «X» նշանի մուտքագրումը նշանակում է, որ Հաճախորդը կարդացել, ծանոթացել, համաձայնվել, ընդունել և ստորագրել է համապատասխան տեքստը/երը և/կամ փաստաթուղթը:
- 2.14. Հաճախորդն իր անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերը Բանկ ներկայացնելով՝ համաձայնում է, որ Բանկը գործարար հարաբերություն ձևավորելու նպատակով հարցում կատարի «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին (և/կամ ֆիզիկական անձանց անձական տվյալները տիրապետող այլ անձի/ սուբյեկտի) և ստանա հասանելի տեղեկությունները համապատասխան անձնական տվյալները գեներացնելով հայտում/հայտ-պայմանագրում և այլ անհրաժեշտ փաստաթղթերում: Ի լրումն սույն կետում նշված պայմանի՝ մինչև համապատասխան Հայտի/Հայտ-պայմանագրի կնքումը, Հաճախորդի սույն կետով տրված համաձայնությունը հաստատվում է գրավոր եղանակով, իսկ Հայտի/Հայտ-պայմանագրի կնքման դեպքում՝ նրա համաձայնությունը համարվում է տրված Պայմաններին միանալու ուժով:
- 2.15. Հաճախորդի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկ ճանաչվելու դեպքերում Բանկը պատասխանատվություն չի կրում բանկային գործառնությունների կամ ծառայությունների տրամադրման համար, քանի դեռ չի ստացել այդպիսի փաստերի մասին պատշաճ ծանուցում, այդ թվում բավարար փաստաթղթային ապացույցներ: Պատշաճ ծանուցում ստանալու դեպքում այդ ծանուցման

ստացմանը հաջորդող աշխատանքային օրվանից մինչև իրավահաջորդի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից գործառնություններ կատարելու համար պատշաճ լիազորությունների ձեռքբերումը և ձևակերպումը, Բանկը կասեցնում է բանկային գործառնությունների և ծառայությունների տրամադրումը, ընդ որում հաճախորդի մահվան դեպքում տուժանքների հաշվարկը կասեցվում է, իսկ տոկոսների հաշվեգրումը չի դադարում: Բանկն իրավունք ունի կասեցնել բանկային գործառնությունների և ծառայությունների տրամադրումը նաև այն դեպքում, եթե սույն կետում նշված փաստերի մասին տեղեկատվություն է ստացել այլ՝ Բանկի կողմից որպես հավաստի գնահատված աղբյուրից:

- 2.16. Բանկի ծառայություններից օգտվելիս՝ Հաճախորդը պարտավոր է ներկայացնել փաստաթղթեր և տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում Բանկին պատշաճ կերպով նույնականացնել Հաճախորդին և ստուգել տվյալ գործառնությունն իրականացնելու Հաճախորդի իրավասությունը:
- 2.17. Հաճախորդին նույնականացնելիս՝ Բանկն ապահովում է համապատասխան փաստաթղթի, դրա վրա առկա ստորագրության կամ ներկայացված անձի նույնականացումը տեսողական զննության միջոցով: Բանկը պարտավոր չէ կիրառել նույնականացման հատուկ միջոցներ և պատասխանատու չէ Հաճախորդի անունից կատարված գործարքների արդյունքում Հաճախորդի կորուստների և վնասների համար, եթե տվյալ իրավիճակում խելամտորեն հնարավոր չէր պարզել, որ գործառնությունը չէր բխում Հաճախորդի իրական կամքից:
- 2.18. Հաճախորդը պարտավոր է Բանկ ներկայացնել լիարժեք տվյալներ, որոնք անհրաժեշտ են իր հետ կապ հաստատելու համար, ինչպես նաև՝ տրամադրել այլ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք ժամանակ առ ժամանակ պահանջվում են Բանկի կողմից՝ բանկային գործառնությունների կատարման շրջանակներում: Հաճախորդը պարտավոր է անհապաղ գրավոր ծանուցել Բանկին այդ տվյալների բոլոր փոփոխությունների մասին: Տվյալների փոփոխության մասին սահմանված կարգով Բանկին չտեղեկացնելու բացասական հետևանքների ռիսկը կրում է Հաճախորդը:
- 2.19. Հաճախորդը պարտավոր է անհապաղ Բանկին գրավոր տեղեկացնել բոլոր այն հանգամանքների և իրադարձությունների մասին, որոնք կարող են ազդել Բանկի հետ փոխհարաբերությունների վրա (ներառյալ՝ առանց սահմանափակման՝ Հաճախորդի անվան/անվանման, կազմակերպարավական ձևի, ռեզիդենտության, հասցեի, ներկայացուցիչների և նրանց լիազորությունների ծավալի փոփոխությունները, Հաճախորդի նկատմամբ սնանկության/անվճարունակության վարույթի հարուցումը և այլն)՝ Բանկի պահանջով ներկայացնելով համապատասխան հանգամանքները և իրադարձությունները հաստատող փաստաթղթեր:
- 2.20. Բանկը Հաճախորդի վերաբերյալ իր մոտ առկա, այդ թվում՝ Հաճախորդի կողմից ներկայացված տվյալները համարում է հավաստի և հիմնվում է դրանց վրա այնքան ժամանակ, քանի դեռ Հաճախորդը Բանկին պատշաճ կերպով չի տեղեկացրել դրանց փոփոխությունների մասին: Ընդ որում, Հաճախորդը տեղեկացված է, որ փոխանցում ստացողի նույնացումը կարող է իրականացվել ստացողի բանկի կողմից՝ հիմնվելով միայն հաշվեհամարի վրա: Մինևս ժամանակ, Բանկն իրավունք ունի ստուգել Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվությունը, ինչի համար պայմանագրի կնքմամբ Հաճախորդը լիազորում է Բանկին իրականացնել ցանկացած, Բանկի կարծիքով անհրաժեշտ վերստուգում, այդ նպատակով Հաճախորդի անունից հարցումներ կատարել համապատասխան տեղեկատվությանը տիրապետող անձանց և մարմիններին:
- 2.21. Կողմերն ընդունում են, որ Պայմաններով սահմանված դեպքերում Էլեկտրոնային եղանակով Հաճախորդին ներկայացվող փաստաթղթերը և տվյալներն ունեն կողմերի ստորագրությամբ ամրագրված թղթային բնօրինակ փաստաթղթի ուժ և նույն իրավական նշանակությունը, համարվում են պաշտոնապես փոխանցված Հաճախորդին և հիմք են հանդիսանում Հաճախորդի Հաշիվներով գործողություններ կատարելու համար: Այն դեպքում, երբ փաստաթղթերի ներկայացումը իրականացվում

Է Հեռակառավարման համակարգերի միջոցով սույն կետով սահմանված դրույթները վերաբերում են նաև Հաճախորդից Նշված համակարգերի միջոցով ստացվող փաստաթղթերին: Ընդ որում, սույն կետում Նշված եղանակներով Հաճախորդին տրամադրվող (Հաճախորդից ստացվող) տվյալների (տեղեկատվության) հիման վրա կատարվող գործողություններից (որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուց) բխող իրավական հետևանքների ռիսկը, հնարավոր վնասները, կորուստները և ծախսերը կրում է Հաճախորդը:

2.22. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բանկը մշակի (հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, պահպանում, օգտագործում և այլն) իր անձնական տվյալները, այն է՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշի կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Հաճախորդի ինքնությունը համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, Բանկի հետ պայմանագրեր կնքելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, Բանկի կողմից անցկացվող ակցիաների (առաջարկների), այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Սույն կետի ուժով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից հարցում կատարվի «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին և վերջինիս լիազորում է Բանկին տրամադրել իր ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք Բանկի կողմից կարող են հաշվի առնվել.

1. վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս (սույն կետը պարտադիր պայման է վարկային հայտ ներկայացնելիս),
2. Մոնիթորինգ իրականացնելիս,
3. Այլ ծառայություններ առաջարկելիս:

Ինչպես նաև տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից Հաճախորդի հետ պայմանագիր կնքելու դեպքում տվյալ պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի, առանց Հաճախորդին նախապես տեղյակ պահելու, «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն Բանկին տրամադրի իր ապագայում առաջացող ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ:

Հաճախորդը սույնով տեղեկացվում է, որ վարկային հարցումների քանակը կարող է բացասական ազդեցություն ունենալ վարկային ամփոփ գնահատականի վրա: Եթե հարցումը կատարվում է մոնիթորինգի շրջանակներում, ապա այն բացասական ազդեցություն չի ունենում:

Սույն կետի ուժով Հաճախորդը լիազորում է Բանկին իրեն վերաբերելի ցանկացած տեղեկություն, որը հասանելի է դարձել Բանկին, ներառյալ իր անձնական տվյալները, տրամադրել այլ կազմակերպություններին և Բանկի գործակալներին, այդ թվում՝ վարկային բյուրոներին, ապահովագրական ընկերություններին կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ անձանց պատկանող տեղեկատվական համակարգերին, տեղեկատվական ընկերություններին (այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ-ին), Նշված տեղեկությունները ստուգելու, վարկային պատմությունը պարզելու և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ապահովվածություն ստանալու համար: Միաժամանակ Հաճախորդը լիազորում է Բանկին այլ ընկերություններից ու կազմակերպություններից, ինչպես նաև իր աշխատանքային վայրից ստանալ իր անձնական տվյալները և Հաճախորդի վերաբերյալ այլ տեղեկություններ:

Հաճախորդը հավաստում է, որ գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել Բանկի կողմից կայացված համապատասխան որոշման վրա:

- 2.23. Անձնական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է Հաճախորդի կողմից տրված, և Բանկը ստանում է Հաճախորդի անձնական տվյալները մշակելու իրավունք՝ Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում այդ պայմանագրերով սահմանված գործողությունների կատարման նպատակով, ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ համագործակցող կազմակերպություններին/անհատներին տրամադրելու նպատակով, պայմանով, որ դա անհրաժեշտ է Բանկին համապատասխան ծառայությունը մատուցելու և/կամ Բանկի համար աշխատանքներ կատարելու և/կամ գույք ձեռքբերելու համար և/կամ բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով:
- 2.24. Հաճախորդի կողմից անձնական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում Բանկը պարտավորվում է դադարեցնել անձնական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հաճախորդի և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես Հաճախորդի և Բանկի միջև պայմանագրային հարաբերությունները ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Հաճախորդի անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում Հաճախորդի անձնական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:
- 2.25. Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է պայմանագրերի գործողության ողջ ժամանակահատվածի համար, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում այդ դեպքերի համար սահմանված ժամանակահատվածի համար:
- 2.26. Բանկն իրավունք ունի պահանջել թարգմանել օտար լեզվով ներկայացված փաստաթղթերը հայերեն, ինչպես նաև՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացնել դրանք: Բանկն իրավունք ունի պատճենել կամ իր մոտ պահել փաստաթղթերը՝ առանց Հաճախորդի ծախսերը հատուցելու պարտավորության:
- 2.27. Հաճախորդը կարող է իր իրավունքը/ները փոխանցել (լիազորել) այլ անձի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված, Բանկի համար ընդունելի լիազորագրի հիման վրա: Լիազորված անձի միջոցով գործառնություններ կատարելիս՝ Հաճախորդը պարտավոր է ապահովել, որ լիազորագիրը հստակ ձևով արտահայտի Հաճախորդի կամքը Հաճախորդի անունից տվյալ գործառնությունը կատարելու համար որևէ երրորդ անձին իրավունք ընձեռնելու վերաբերյալ: Հաճախորդը այլ անձին տրված լիազորագիրը հետ կանչելու դեպքում, պարտավոր է այդ մասին անմիջապես գրավոր ծանուցել Բանկին (լիազորագրի հիման վրա գործարք կատարող Բանկի մասնաճյուղին): Բանկը պատասխանատվություն չի կրում լիազորված անձի միջոցով կատարված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, եթե Լիազորված անձի կողմից համապատասխան գործողությունների իրականացման պահին Բանկը (լիազորագրի հիման վրա գործարք կատարող Բանկի մասնաճյուղը) չի ստացել Հաճախորդի գրավոր ծանուցումը լիազորագիրը հետ կանչելու մասին: Հաճախորդը Բանկի առջև ամբողջ ծավալով պատասխանատվություն է կրում իր կողմից լիազորված անձանց գործողությունների համար: Հայերենից տարբերվող այլ լեզվով

լիազորագիր ներկայացնելու դեպքում Բանկ պետք է ներկայացվի նաև լիազորագրի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանված տարբերակ, ընդ որում Բանկը իր հայեցողությամբ կարող է ընդունել լիազորագիր առանց թարգմանություն պահանջելու:

- 2.28. Որոշակի տեսակի բանկային գործառնություններ իրականացնելու համար Հաճախորդը կարող է իր իրավունքը/ները ամբողջությամբ կամ մասնակի փոխանցել (լիազորել) այլ անձի՝ Բանկի տարածքում և Բանկի իրավասու մարմնի կողմից սահմանված լիազորագրի հիման վրա: Լիազորագիրը Բանկում ձևակերպելու համար Բանկի կողմից կարող է սահմանվել սակագին:
- 2.29. Բանկը կարող է սեփական նախաձեռնությամբ ժամանակավորապես՝ ամբողջովին կամ մասամբ, դադարեցնել «EvocaTOUCH» և/կամ «EvocaOnline» համակարգերի միջոցով Ծառայությունների մատուցումը՝ անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացման նպատակով տեխնիկական սպասարկում իրականացնելու և անխափան աշխատանքի ապահովման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու հետևանքով:
- 2.30. Հաճախորդը գիտակցում, համաձայնվում և անվերապահորեն ընդունում է, որ Բանկի հետ գործարար հարաբերության հաստատումը՝ պայմանավորված Հաճախորդի լրացուցիչ ուսումնասիրությամբ, սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո կարող է տևել մինչև 90 (իննսուն) օր:
- 2.31. Հաճախորդը գիտակցում, համաձայնվում և անվերապահորեն ընդունում է, որ Բանկը իրավունք ունի միակողմանի՝ իր նախաձեռնությամբ լուծել տվյալ պահին Հաճախորդի հետ գործող պայմանագրային իրավահարաբերությունները (Բանկային հաշվի պայմանագիր, Քարտային հաշվի պայմանագիր և այլն) այն դեպքում, եթե Հաճախորդի գործունեությունը կամ վերջինիս հետ գործարար հարաբերությունը Բանկի կարծիքով պարունակում է ֆինանսական հանցագործության ռիսկեր, եթե Հաճախորդի կողմից թույլ է տրվել սույն Պայմաններով սահմանված որևէ դրույթի խախտում, եթե Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Հաճախորդը ճանաչվել է անցանկալի:
- 2.32. Բանկն իրականացնում է Հաճախորդի կարգադրությամբ այն բոլոր Հաշվարկային և դրամարկղային գործառնությունները, որոնք ՀՀ օրենսդրությամբ արգելված չեն, ծառայությունների մատուցման ընթացքում բացակայում են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով և/կամ ՀՀ Նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով առկա սահմանափակումներ, ինչպես նաև ֆինանսական հանցագործությունների ռիսկի տարրեր:
- 2.33. Հաճախորդը գիտակցում և համաձայնվում է, որ Բանկը պարտավոր է կատարել ՀՀ օրենսդրության և ՀՀ Նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև իրավապահ մարմինների պահանջները, որոնք վերաբերում են ֆինանսական հանցագործությունների, մասնավորապես՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանը:
- 2.34. Ֆինանսական հանցագործությունների կասկածի դեպքում Բանկն իրավասություն ունի մերժել հաճախորդի գործարքի կատարումը, այդ թվում մինչև 30 օրացույցային օր մերժել բոլոր գործարքների կատարումը, գործարար հարաբերության հաստատումը կամ միակողմանիորեն դադարեցնել առկա գործարար հարաբերությունները՝ այդ մասին նախապես գրավոր տեղեկացնելով հաճախորդին:
- 2.35. Ի կատարումն ֆինանսական հանցագործությունների կանխարգելման վերաբերյալ միջազգային և/կամ ՀՀ Նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների՝ Բանկն իրավունք ունի Հաճախորդից պահանջել ներկայացնելու բոլոր անհրաժեշտ տեղեկությունները վերջինիս կողմից ներկայացված հանձնարարականների, Հաշվով կատարվող գործարքների, Հաշվին մուտքագրվող և ելքագրվող գումարների վերաբերյալ, իսկ վերջիններս չտրամադրելու դեպքում կասեցնել և/կամ մերժել վերոնշյալ հանձնարարականների կատարումը, Հաշվով գործարքների կատարումը կամ կիրառել այլ սահմանափակումներ, այդ թվում մերժել/դադարեցնել հաճախորդի հետ գործարար հարաբերությունը:
- 2.36. ՀՀ օրենսդրության, միջազգային իրավունքի նորմերի, միջազգային և օտարերկրյա պատժամիջոցների հիման վրա, Բանկի կողմից միակողմանի ստանձնած պարտավորությունների արդյունքում Բանկի

թղթակից բանկերի պահանջով կամ Բանկի իրավասու մարմնի որոշմամբ՝ Բանկը կարող է սահմանափակումներ կամ արգելքներ սահմանել և կիրառել, որոշակի երկրի քաղաքացիություն և/կամ ռեզիդենտություն ունեցող և/կամ առանձին խմբի դասվող անձանց նկատմամբ: Նման սահմանափակումների արդյունքում կարող են ինչպես արգելվել Հաշվի սպասարկումն ու Հաճախորդի հետ համագործակցությունն ընդհանրապես, այնպես էլ կիրառվել առանձին ծառայությունների գծով սահմանափակումներ:

- 2.37. Բանկն իրավունք ունի մերժել և/կամ կասեցնել հաճախորդի գործարքի կատարումը, հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատումը կամ դադարեցնել գործող գործարար հարաբերությունները հաճախորդի վերաբերյալ բացասական տեղեկությունների առկայության դեպքում:
- 2.38. Ֆինանսական հանցագործությունների կանխարգելման, միջազգային պատժամիջոցների կիրառմամբ և/կամ ֆորսմաժորային իրավիճակներում (այդ թվում՝ ՀՀ տարածքից դուրս) արտարժույթի շուկայում դրսևորվող փոխարժեքի կտրուկ տատանումներով (որևէ օրվա/օրերի ընթացքում փոխարժեքի փոփոխության 5 տոկոս և ավել կուտակային աճի/նվազման դեպք/երում) պայմանավորված և դրանցից բխող ռիսկերը կանխարգելելու նպատակով՝ սահմանել Հաճախորդի կողմից արտարժույթով կատարվող գործարքների իրականացման սահմանաչափերն ու վճարման կարգը, այդ թվում ժամանակավորապես սահմանափակել, և/կամ մասնակի բավարարել՝ ելքագրման, փոխանցման, արտարժույթի փոխարկման գործարքները՝ հիմք ընդունելով գործարքի իրականացման պահին Բանկի ներքին իրավական ակտերով և Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում www.evoca.am, հրապարկված սպասարկման հատուկ ընթացակարգերը, պայմանագրային սակագները և գործարքային գների օրական գնանշումները:
- 2.39. Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ՀՀ հարկային մարմնին, համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 80.2 գլխի, ՀՀ պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ օտարերկրյա պետական լիազոր մարմինների կամ վերջիններիս ներկայացուցիչներին տրամադրել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը, ընդ որում՝ Պայմանների ընդունմամբ Հաճախորդի համաձայնությունը համարվում է տրամադրված ինչպես սույն կետով սահմանված, այնպես էլ Պայմաններով նախատեսված այլ դեպքերով բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության տրամադրման մասով:
- 2.40. Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան այլ բանկերին, վարկային կազմակերպություններին, վարկային բյուրոներին, ինչպես նաև Ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամին՝ վերջիններիս պահանջով կամ իր նախաձեռնությամբ տրամադրել Հաճախորդի և նրա հաշիվների, ինչպես նաև վարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն: Բանկը կարող է օտարերկրյա օրենսդրության պահանջներին համապատասխան՝ օտարերկրյա օրենսդրության ներքո ընկնող Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել օտարերկրյա իրավասու մարմիններին:
- 2.41. Սույն կետի և ենթակետերի դրույթները վերաբերում են «Օտարերկրյա հաշիվների հարկման համապատասխանության մասին» (Foreign Account Tax Compliance Act, այսուհետ՝ FATCA) ԱՄՆ օրենքի իմաստով «ԱՄՆ անձանց» և CRS (The Common Reporting) ստանդարտով ՊԵԿ-ի կողմից հրապարակված երկրների ցանկի հարկատու անձանց: Ընդ որում՝ այդ ցանկը թարմացվում է ՊԵԿ-ի կողմից և Բանկը պատասխանատու չէ նախապես տեղեկացնել:
- 2.41.1. ԱՄՆ FATCA օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Բանկն իրավունք ունի Հաճախորդի և վերջինիս հաշիվների և Բանկին հայտնի եկամուտների մասին տեղեկատվություն տրամադրի ԱՄՆ Ներքին եկամուտների ծառայությանը (Internal Revenue Service, IRS)՝ վերոհիշյալ օրենքի հիման վրա սահմանված Հաշվետվական ձևերով:

2.41.2. FATCA օրենքի դրույթներին, ինչպես նաև ԱՄՆ քաղաքացիություն ունեցող անձանց, ԱՄՆ ռեզիդենտների, ԱՄՆ կացության կարգավիճակ ունեցող անձանց մասին հաշվետվություն ներկայացնելու, որոշ եկամուտներից հարկային պահումների ենթարկվելու և իրեն՝ որպես ԱՄՆ անձի վերաբերող ԱՄՆ օրենսդրության պահանջներին ծանոթ լինելու պարտականությունը կրում է Հաճախորդը:

2.41.3. Հաճախորդը պարտավորվում է որևէ կերպ չվիճարկել ի կատարումն FATCA-ի Բանկի իրականացրած որևէ գործողություն և չներկայացնել որևէ պահանջ նշված օրենքի շրջանակներում Բանկի կատարած գործողությունների առնչությամբ:

- 2.42. Ապագայում ԱՄՆ անձի կարգավիճակ ձեռք բերելիս Հաճախորդը պարտավոր է այդ մասին Բանկին գրավոր ծանուցել (տեղեկացնել)՝ առավելագույնը 30-օրյա ժամկետում:
- 2.43. Հաճախորդը թույլատրում է Բանկին օգտագործել Հաճախորդի կոնտակտային տվյալները (անուն, ազգանունը, հասցեն և Բանկին տրամադրված ցանկացած հաղորդակցման տվյալները), ինչպես նաև իր հայեցողությամբ և առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու՝ Բանկի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող ընկերություններին տրամադրել այդ տվյալները՝ Բանկի կողմից ծառայությունների մատուցման, Հաճախորդին ծառայություններ առաջարկելու կամ մատուցվող ծառայությունները բարելավելու նպատակով:
- 2.44. Հաճախորդը համաձայնում և հանձնարարում է, որ իր դրամային պարտավորությունների կատարման նպատակով Բանկ մոտեցած երրորդ անձին Բանկը տրամադրի բավարար տվյալներ/տեղեկատվություն իր վարկային պարտավորությունների մարումն իրականացնելու համար:
- 2.45. Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ անձի կողմից կրած ուղղակի կամ անուղղակի ծախսերի և վնասների համար (ներառյալ սպասվելիք եկամտի կամ տոկոսների կորուստը), եթե այդպիսիք ամբողջությամբ կամ մասամբ առաջացել են Բանկի կողմից ֆինանսական հանցագործությունների կանխարգելման հետ կապված գործողություններ կատարելու հետևանքով, ինչպես նաև ի կատարումն ՀՀ օրենսդրության այլ պահանջների:
- 2.46. Բանկը սույն Պայմանների հիման վրա Հաճախորդի՝ առձեռն/առերես կամ Հեռակառավարման համակարգերով ներկայացված էլեկտրոնային Հայտի/Դիմումի հիման մատուցում է հետևյալ ծառայությունները՝
- Բանկային հաշիվների բացում և սպասարկում,
 - Վճարային քարտերի տրամադրում, քարտային հաշիվների սպասարկում,
 - Վճարային թվային քարտերի տրամադրում, քարտային հաշիվների սպասարկում,
 - Ժամկետային ավանդների ընդունում և սպասարկում,
 - Չիրկիզվող անհատական Պահատուփերի տրամադրում,
 - Ֆիզիկական անձանց վարկերի տրամադրում,
 - Բանկային հաշվով հաշվարկային և դրամարկղային գործարքների իրականացում,
 - ՀՀ օրենսդրությամբ չարգելված՝ Բանկի Սակագներով նախատեսված այլ ֆինանսական գործառնությունների իրականացում:
- 2.47. Սույն Պայմանների շրջանակներում Հաճախորդին հնարավորություն է տրվում օգտվել Պայմաններով սահմանված ցանկացած ծառայությունից:
- 2.48. Հաճախորդն իրավունք չունի Բանկ ներկայացնել Բանկի կողմից սահմանված Ձևաթղթից տարբերվող կամ շեղվող դիմումներ, հայտեր:
- 2.49. Սույն Պայմանների շրջանակներում Հաճախորդը, որպես պարտադիր պայման բացում է Բանկային հաշիվ: Հաճախորդի կողմից ներկայացված Դիմումի/Հայտ-պայմանագրի/Հայտի հիման վրա Բանկը, Բանկային հաշվի կիրառմամբ մատուցում է Բանկային ծառայություններ նաև Հեռակառավարման համակարգերի միջոցով:

	Համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմաններ	TRM17-0005-09 PUB Խմբագրություն: 15 Հաստատված՝ 21.04.2025թ.
--	--	--

- 2.50. Բանկի Գործունեության վայրում Բանկային ծառայություններից օգտվելիս Հաճախորդը ներկայացնում է փաստաթղթեր և/կամ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում Բանկին, պատշաճ կերպով նույնականացնել Հաճախորդին և ստուգել տվյալ գործառնությունն իրականացնելու Հաճախորդի իրավասությունը:
- 2.51. Պայմանները, Սակագները, Հաճախորդին մատուցվող ծառայությունների տեսակները և/կամ դրանց մատուցման, այդ թվում Հաճախորդին նույնականացման պայմանները և/կամ կարգը, այդ թվում Բանկի կողմից ծառայությունների մատուցման համար Հաճախորդից պահանջվող փաստաթղթերի ցանկը, բանկային հաշիվների մնացորդների դիմաց հաշվարկվող տոկոսադրույքի չափը սահմանվում և կարող են միակողմանիորեն փոփոխվել Բանկի կողմից, որոնց փոփոխությունները հասանելի են բանկի գործունեության վայրում և/կամ բանկի պաշտոնական կայքում, իսկ Հեռակառավարման համակարգի ծառայություններից օգտվելու դեպքում նաև Հեռակառավարման համակարգ: Նշված փաստաթղթերի փոփոխությունների մասին Բանկը Հաճախորդին ծանուցում է դրանց ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ, եթե ՀՀ օրենսդրությամբ և Պայմաններով այլ ժամկետ սահմանված չէ՝ ինտերնետային և մոբայլ տիրույթներում, նաև հրապարակելու միջոցով, իսկ Կողմերի միջև Նախապես համաձայնեցված լինելու դեպքում նաև Հաճախորդի համար Նախընտրելի այլ եղանակով: Եթե մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը Հաճախորդը գրավոր չի տեղեկացնում Բանկին՝ Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները դադարեցնելու իր ցանկության մասին, ապա այդ փոփոխությունները համարվում են ընդունված (ակցեպտավորված) Հաճախորդի կողմից:
- 2.52. Կողմերի միջև Նախապես համաձայնեցված լինելու դեպքում Բանկը Հաճախորդի հետ հաղորդակցվում է, այդ թվում ուղարկում է հաղորդագրություններ, Բանկի կողմից մատուցվող Ծառայությունների հետ կապված փաստաթղթեր Հաճախորդի հետ համաձայնեցված եղանակով և հաղորդակցման տվյալներով: Բանկն իրավունք ունի օգտագործել Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը և այլ հաղորդակցման տվյալները՝ Հաճախորդին Բանկի կողմից մատուցվող Ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական, գովազդային բնույթի հաղորդագրություններ ուղարկելու նպատակով: Տեղեկատվական բնույթի հաղորդագրությունը կարող է ներառել Հաշիվների քաղվածքները, Բանկի Ծառայությունների պայմանների, Կողմերի միջև հաղորդակցման կարգի, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանման, փոփոխման կամ դադարեցման, Բանկի ծառայությունների և տարեկան տոկոսային եկամտաբերության վրա ազդեցություն ունեցող օրենքների, Նորմատիվ իրավական ակտերի, Բանկի ներքին իրավական ակտերի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև Հաճախորդի պարտավորությունների, դրանց առաջացման հիմքերի, մարումների վերաբերյալ և պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Բանկի կողմից կիրառված (կիրառվող) պատասխանատվության միջոցների, դրանց կիրառման կարգի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Հաճախորդի ներկայացրած Հայտերի/Դիմումի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել Հաճախորդին էլեկտրոնային եղանակով, որի մասով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, ներառյալ՝ Հեռակառավարման համակարգի էջերի համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Հեռակառավարման համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով:
- 2.53. Հաճախորդն ընդունում է, որ տեղեկատվությունը, ուղարկվող ծանուցումները, քաղվածքները էլեկտրոնային կամ փոստային կապի, ինչպես նաև բջջային հեռախոսակապի կարճ հաղորդագրության (SMS) միջոցով ծանուցման դեպքում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված՝ վերջինիս

հասցեագրված Բանկի հաղորդագրությունը Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված փոստային հասցեին, էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկվելու դեպքում անկախ այն հանգամանքից, թե Հաճախորդը փաստացի, երբ է ստանում այդ տեղեկատվությունը: Հաճախորդը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Բանկին իր հասցեի, Բանկին ներկայացված այլ տեղեկություններում և փաստաթղթերում ցանկացած փոփոխությունների մասին, այդ թվում՝ ռեզիդենտության կարգավիճակի փոփոխության մասին: Հաճախորդի կողմից վերոնշյալ պարտավորության չկատարման դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Բանկում առկա տեղեկությունների կամ փաստաթղթերի հիման վրա Հաճախորդի կողմից կատարված գործողությունների հետևանքով Հաճախորդի կողմից կրած վնասների համար:

- 2.54. Բանկը պատասխանատվություն չի կրում էլեկտրոնային կամ բջջային կապուղիներով ծանուցումների և անհրաժեշտ այլ տեղեկատվությունների տրամադրման դեպքում հաճախորդի հեռախոսահամարի և/կամ էլեկտրոնային փոստի ոչ հասանելի լինելու և դրա հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:
- 2.55. Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Բանկում և կարող են որպես ապացույց տրամադրվել:
- 2.56. Հաճախորդը ընդունում է, որ Հաճախորդի և Բանկի միջև հեռախոսագրույցն անվտանգության նկատառումներից ելնելով կարող է ձայնագրվել, որն ունի ապացուցողական նշանակություն և կարող է օգտագործվել Բանկի կողմից ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի շրջանակներում:
- 2.57. Բանկի Գործունեության վայրում և/կամ Կոնտակտ կենտրոնի կողմից Հաճախորդը սպասարկվում է՝ Գործառնական օրվա ընթացքում, իսկ Հեռակառավարման համակարգերի միջոցով՝ հանձնարարականի ստացման գործառնական օրվա ընթացքում, եթե Հաճախորդի կողմից այլ կատարման ժամկետ նշված չէ: Պայմանների իմաստով գործառնական օր է համարվում Հաճախորդի սպասարկման համար Բանկի մասնաճյուղերի և Կոնտակտ կենտրոնի համար սահմանված օրերն ու ժամերը:
- 2.58. Հաճախորդը ընդունում և համաձայն է, որ հեռակառավարման համակարգերի միջոցով Գործառնական օրվանից դուրս ներկայացված Բանկային ծառայությունների մատուցման հայտերը Բանկը կարող է կատարել հաջորդ Գործառնական օրվա ընթացքում, եթե առկա չեն սույն Պայմաններով սահմանված և կատարման համար հիմք հանդիսացող արգելքներ և/կամ սահմանափակումներ:
- 2.59. Գործառնական օրվա ավարտից հետո հաճախորդի կողմից ներկայացված արտարժույթի փոխանակման հայտերի ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել 5 (հինգ) միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը: Անհրաժեշտությունից ելնելով նշված սահմանաչափը Բանկի կողմից կարող է միակողմանի նվազեցվել:
- 2.60. Հաճախորդը համաձայն է, որ Բանկի և իր ներկայացուցչի միջև Բանկի տարածքում կամ իրական ժամանակի ռեժիմում հեռահար ցանկացած կապի միջոցի օգտագործմամբ գրույցը անվտանգության նկատառումներից ելնելով, կարող է ամբողջությամբ ձայնագրվել, և այդ ձայնագրությունը կարող է ունենալ ապացուցողական նշանակություն և օգտագործվել Բանկի կողմից իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:
- 2.61. Հաճախորդը համաձայն է ինտերնետ միջավայրում քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով ինտերնետային վճարումներ կատարելիս Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարի կամ էլ. փոստի միջոցով ստանալ մեկանգամյա գաղտնաբառ, որի մոլուքագրմամբ հնարավոր կլինի կատարել ինտերնետային վճարումը՝ VBV/Secure code նշում ունեցող կայքերում:
- 2.62. Հաճախորդը տեղեկացված է, որ էլեկտրոնային եղանակով ուղարկված ցանկացած հաղորդագրություն կարող է ներխուժման և միջամտության ենթարկվել երրորդ անձանց կողմից: Հաճախորդը գիտակցում է նաև, որ իր կողմից նշված փոստային հասցեով իրեն ուղարկվող տեղեկատվությունը կարող է

հասանելի դառնալ երրորդ անձանց՝ Բանկի կամքից անկախ պատճառներով: Այդ կապակցությամբ Հաճախորդը հաստատում է, որ Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների համար, որոնք կարող են առաջանալ վերը նշված պատճառներով տեղեկատվությունն ուշացումով ստանալու կամ այդ տեղեկատվությունը Բանկի կամքից անկախ պատճառներով կամ ոչ Բանկի մեղքով երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով:

- 2.63. Բանկը պատասխանատու չէ պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատումների կամ խափանման հետևանքով առաջացած Հաճախորդի վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար:
- 2.64. Հաճախորդը հայտարարում է, որ հասկացել է սույն Պայմանների, Ծառայության պայմանների և Սակագների իմաստը և, որ օժտված է Բանկային ծառայություններից օգտվելու համար ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով պահանջվող համապատասխան իրավունակությամբ, գործունակությամբ և լիազորություններով:
- 2.65. Հաճախորդը համաձայնում և հանձնարարում է, որ Բանկ դիմած երրորդ անձին, ով տիրապետում է Հաճախորդի վարկային պարտավորությունների մասին Բանկի համար ընդունելի չափով բավարար տվյալների, Բանկը տրամադրի հնարավորություն Հաճախորդի վարկային պարտավորությունների մարումն իրականացնելու համար:
- 2.66. ՀՀ քաղաքացի չհանդիսացող կամ ոչ ռեզիդենտ հանդիսացող Հաճախորդներին բանկային ծառայություններ մատուցելու համար Բանկի վարչության կողմից կարող են սահմանվել այլ պայմաններ, սակագներ, ընթացակարգային կարգավորումներ: Ընդ որում՝ սույն կետով սահմանված հանգամանքի դեպքում Պայմանները կիրառվում և տարածվում են նման հաճախորդների վրա այնքանով, որքանով չեն հակասի Բանկի վարչության սահմանած պայմաններին:
- 2.67. Բանկը գործարար հարաբերություններ կարող է ձևավորել նաև հեռավար եղանակով Հաճախորդի պատշաճ նույնականացումն իրականացնելուց հետո:

3. Բանկային հաշիվներ

- 3.1. Սույն գլուխը սահմանում է Կողմերի միջև Հաշվի բացման և վարման (սպասարկման) կարգն ու պայմանները, Կողմերի միջև ծագող պայմանագրային հարաբերությունները, և կարգավորում են Հաշվի հետ կապված Կողմերի միջև ծագած այն հարաբերությունները, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 50-րդ գլխով (Բանկային հաշիվ):
Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 51-րդ (Հատուկ բանկային հաշիվ) գլխով հատուկ բանկային հաշիվների բացման և վարման հետ կապված առանձնահատկությունները կարգավորվում են Բանկի կողմից սահմանված այլ կանոններով, ներքին իրավական ակտերով և հատուկ բանկային հաշվի պայմաններով:
- 3.2. Հաշիվները կարող են բացվել ինչպես Բանկի Գործունեության վայրում, այնպես էլ Բանկի կողմից սահմանված կարգով և ձևով պատշաճ նույնականացումը անցնելուց հետո Հեռակառավարման համակարգերի միջոցով: Ընդ որում՝ Հաշիվներ կարող են բացվել նաև Բանկի հետ համագործակցության պայմանագրի շրջանակում գործընկեր կազմակերպությունների կողմից առաջարկվող հավելվածների միջոցով:
- 3.3. Հաշիվները բացվում են Բանկի կողմից սահմանված փաստաթղթերը ներկայացվելու դեպքում Բանկի կողմից սահմանված ձևանմուշով Հաճախորդի Հաշվի բացման Հայտ-պայմանագրի, պայմանագրի կամ Բանկի կողմից սահմանված այլ տիպային փաստաթղթի հիման վրա: Սույն Պայմանները, Սակագներ և Դրույքները, ինչպես նաև տվյալ տեսակի Հաշվի առանձնահատկությունները կարգավորող Բանկի

կողմից ընդունված այլ փաստաթղթերը միասին կազմում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

- 3.4. Հեռակառավարման համակարգերի միջոցով հաշիվների բացումը իրականացվում է Հեռակառավարման համակարգերով Հաճախորդի ներկայացրած էլեկտրոնային Հայտի կամ Դիմումի հիման վրա, որի համար կիրառվում է սույն Պայմանագրով սահմանված Հաճախորդի հավաստագրման և նույնականացման միջոցները:
- 3.5. Մինչև 14 տարեկան անչափահաս անձի անունով բանկային հաշիվը բացվում և տնօրինվում է անչափահաս անձի օրինական ներկայացուցիչների կողմից, իսկ անչափահաս անձի 14 տարին լրանալուց հետո օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ հաշիվը կարող է տնօրինվել անչափահաս անձի կողմից ինքնուրույն, Բանկի կողմից սահմանված պայմանների շրջանակում 14 մինչև 18 տարեկան անչափահաս անձը օրենքով նախատեսված դեպքերում և/կամ օրինական ներկայացուցչի (ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի) գրավոր համաձայնությամբ՝ կարող է Բանկում ինքնուրույն բացել բանկային հաշիվներ և ինքնուրույն տնօրինել դրանցում առկա միջոցները, եթե տվյալ ֆինանսական գործառնությունների մասով այլ պայմաններ սահմանված չեն Բանկի կողմից:
- 3.6. Բանկային հաշիվը բացվում է Սակագներ և Դրույքներ փաստաթղթով տվյալ տեսակի հաշվի համար սահմանված պայմաններով, որը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մաս և որին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի միջոցով: Բանկային հաշվի բացման պայմանները և սակագները հրապարակային են և դրանք տեղակայված են Բանկի www.evoca.am պաշտոնական ինտերնետային կայքի «Հաշիվներ» ենթաբաժնում:
- 3.7. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել Հաճախորդի հաշվի և/կամ դրան մուտքագրված գումարի՝ Հաճախորդի կողմից տնօրինման հնարավորությունը, ինչպես նաև մերժել փոխանցված գումարի մուտքագրումը Հաճախորդի հաշվին և/կամ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության հետ փոխանցել այդ գումարը փոխանցող կողմին (այդ թվում ելքագրելով այն Հաճախորդի հաշվից)՝ գանձելով Սակագներով սահմանված միջնորդավճարը, եթե.
 - 3.7.1. Հաճախորդի հաշվին փոխանցված կամ մուտքագրված գումարի հետ կապված Բանկն ունի տեղեկատվություն կամ կասկածներ՝ զեղծարար գործարք կամ գործարքների շղթայի մաս լինելու վերաբերյալ, այդ թվում միջազգային վճարային համակարգերից ստացված զեղծարարության հաշվետվություններում խնդրահարույց գործարքը նույնականացնող տվյալների առկայության դեպքում,
 - 3.7.2. Բանկը գումարը փոխանցող բանկից ստանում է տեղեկատվություն և գրավոր պահանջ՝ փոխանցման գործարքը որպես զեղծարար որակելու և Հաճախորդին փոխանցված գումարը հետ վերադարձնելու մասին,
 - 3.7.3. Փոխանցումը կապված է կրիպտոարժույթով կատարված գործարքի հետ, և/կամ գործարքի կողմը կրիպտոարժույթի հետ կապված գործունեություն իրականացնող անձ է:
- 3.8. Բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել Հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ Բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ՝ իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ:
- 3.9. Եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով կամ Կողմերի համաձայնությամբ, Հաճախորդի հաշվին բավարար դրամական միջոցների առկայության դեպքում այդ միջոցները դուրս են գրվում հաշվից՝ Հաճախորդի հանձնարարականները Բանկ մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), որն առանձնանում է՝ ըստ հանձնարարականների ստացման յուրաքանչյուր եղանակի (յուրաքանչյուր հեռահար սպասարկման համակարգի համար՝ առանձին, և Բանկի տարածքում առանձին): Ընդ որում՝ Նշված հաջորդականությունը Բանկի կողմից կարող է փոխվել՝

կախված Բանկի գործառնական համակարգերի տեխնիկածրագրային հնարավորություններից և Բանկի կողմից սահմանված ներքին հաստատումների համակարգից, իսկ խմբային կամ միաժամանակ ներկայացված հանձնարարականների կատարման հաջողականությունը Բանկը որոշում է ինքնուրույն, եթե առկա չէ Կողմերի համաձայնությունը՝ որևէ հանձնարարականի առաջնահերթ կատարման վերաբերյալ:

- 3.10. Բանկն ընդունում է Հաճախորդի կողմից ներկայացված վճարման հանձնարարականը Բանկի կողմից սահմանված գործառնական ժամերի ընթացքում:
- 3.11. Հաճախորդի հայտերով, այդ թվում՝ հեռահար կապի միջոցներով ստացված հայտերով՝ արտարժույթի առքուվաճառքի գործառնությունները, անկախ հայտի ստացման պահից, իրականացվում են Բանկի կողմից գործարքի փաստացի կատարման պահի դրությամբ Բանկի սահմանած փոխարժեքներով և կարգով: Աշխատանքային ժամերից դուրս, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին ստացված արտարժույթի փոխանակման հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:
- 3.12. Բանկային հաշվին կանխիկ միջոցները մուտքագրվում են գումարի ներկայացման պահին, իսկ անկանխիկ միջոցները՝ թղթակից բանկից հավաստիացնող փաստաթղթերի առկայության դեպքում:
- 3.13. Հաճախորդի կողմից ներկայացված հայտի հիման վրա Բանկը Հաճախորդին տրամադրում է կանխիկ միջոցներ համաձայն Սակագներ և դրույքների, որոնց Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքի «Սակագներ» բաժնի «Դրամարկղային գործարքներ» ենթաբաժնում կամ Բանկի գործունեության վայրում:
- 3.14. Բանկը Հաճախորդի բանկային հաշվից կանխիկ դրամական միջոցներ է տրամադրում Հաճախորդի հայտի հիման վրա, ընդ որում 10,000,000 (Տասը միլիոն) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումար կանխիկ ստանալու համար Հաճախորդը 1 (մեկ) օր առաջ մինչև ժամը 13:00 բանավոր տեղեկացնում կամ գրավոր հայտ է ներկայացնում Բանկի գլխամասային գրասենյակ կամ մասնաճյուղեր: Հաճախորդին բանկային հաշից կանխիկ դրամական միջոցներ հատկացնելիս գանձվում է կանխիկացման վճար համաձայն Բանկի վարչության կողմից հաստատված սակագների, որոնց Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքի «Սակագներ» բաժնի «Դրամարկղային գործարքներ» ենթաբաժնում:
- 3.15. Սակագներ և դրույքներով սահմանված լիսեյնու դեպքում Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվների մնացորդների դիմաց հաշվեգրվում են տոկոսներ, որոնց Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքի «Սակագներ» բաժնի «Ընթացիկ հաշիվներ» ենթաբաժնում: Ընդ որում՝ բանկի լիազոր մարմնի կողմից կարող են սահմանվել բացառություններ:
- 3.16. Բանկը Հաճախորդի հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրում է ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լիսեյնու հաջորդ օրը:
- 3.17. Բանկը պատասխանատվություն չի կրում.
 - 3.17.1. Հաճախորդի կրած այն ծախսերի, կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են Հաճախորդի հաշվին բավարար միջոց չլիսեյնու պատճառով Հաճախորդի հանձնարարականը չկատարելու արդյունքում,
 - 3.17.2. Հաճախորդի կրած այն ծախսերի, կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են Հաճախորդի կողմից տրված սխալ, երկիմաստ և ոչ հստակ հանձնարարականի կատարման արդյունքում,
 - 3.17.3. Հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականի հիման վրա փոխանցվող գումարի կապակցությամբ՝ շահառուի Բանկի կամ միջնորդ Բանկի կողմից լրացուցիչ տեղեկատվություն պահանջելու կամ փոխանցումը կասեցնելու, գումարները սառեցնելու կամ դրանք չփոխանցելու և դրա հետևանքով առաջացած Հաճախորդի ծախսերի, կորուստների և վնասների համար:

- 3.18. Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության, Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներից, այդ թվում արտարժույթային հաշիվներից առաջնահերթ՝ Բանկի կողմից սահմանված հերթականությամբ գանձել Հաճախորդի՝ Բանկի նկատմամբ ունեցած պարտավորության գումարները, ներառյալ՝ Սակագներով նախատեսված միջնորդավճարները, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականների կատարման հետ կապված Բանկի կրած ծախսերի գումարները: Ընդ որում, եթե Հաճախորդի ՀՀ դրամով ընթացիկ հաշվին առկա չէ բավարար գումար առկա պարտավորությունը մարելու համար, գումարը նախ գանձվում է Բանկում ունեցած Հաճախորդի ընթացիկ կամ խնայողական հաշիվներից (այդ թվում՝ այլ արժույթով), իսկ դրանցում միջոցների բացակայության դեպքում՝ Հաճախորդի՝ այլ քարտային հաշիվներից (այդ թվում՝ այլ արժույթով):
- 3.19. Բանկը կարող է առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության ելքագրել Հաճախորդի բանկային հաշվում եղած միջոցները՝ Հաճախորդի կնքած պայմանագրերի կամ դատարանի վճռի հիման վրա, ինչպես նաև օրենքով և/կամ Պայմանագրով սահմանված դեպքերում:
- 3.20. Հաճախորդը համաձայնում է, որ Բանկը կարող է առանց իր լրացուցիչ հանձնարարության ելքագրել Բանկի կողմից, այդ թվում՝ Բանկի կամ Բանկի հետ համագործակցող կազմակերպության սարքավորման միջոցով, ծրագրային ավտոմատացված լուծումներով, Հաճախորդի հաշվին սխալ կամ սխալմամբ մուտքագրված միջոցները, եթե այդ մուտքագրումը ծրագրային, տեխնիկական խափանման, Բանկի աշխատակցի կողմից թույլ տրված սխալի, վրիպակի արդյունք է:
- 3.21. Բանկային հաշիվներին մուտքագրումներ կարող են իրականացվել Վճարային տերմինալների միջոցով: Վճարային տերմինալներով գործարքներ իրականացնելու դեպքում տվյալ վճարահաշվարկային կազմակերպության կողմից կարող են սահմանվել միջնորդավճարներ, որին Հաճախորդը կարող է ծանոթանալ տվյալ վճարային տերմինալի միջոցով՝ գործարքն իրականացնելուց առաջ կամ տվյալ Վճարային տերմինալը սպասարկող վճարահաշվարկային համակարգի ինտերնետային կայքից:
- 3.22. Բանկային հաշիվներով Հաշվարկային և դրամարկղային գործառնություններն իրականացվում են հաշվի մնացորդի սահմաններում հաշվի առնելով Բանկի Սակագներով սահմանված միջնորդավճարները և պահպանելով չնվազող մնացորդի սահմանաչափը (Սակագներով սահմանված լինելու դեպքում): Սակագներին և միջնորդավճարներին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքի «Սակագներ» բաժնի «Ընթացիկ հաշիվներ» և «Դրամարկղային գործարքներ» ենթաբաժիններում:
- 3.23. Բանկն իրավունք ունի օգտագործել Հաճախորդի Բանկային հաշվում եղած դրամական միջոցները՝ երաշխավորելով այդ միջոցներն անարգել տնօրինելու Հաճախորդի իրավունքը:
- 3.24. Բանկն ունի գրավի իրավունք Հաշվին առկա բոլոր միջոցների նկատմամբ՝ որպես Բանկի և Հաճախորդի միջև առկա և/կամ հետագայում առաջացող Հաճախորդի բոլոր պարտավորությունների կատարման ապահովում, եթե այլ բան սահմանված չէ այլ պայմանագրերով, կանոններով և/կամ պայմաններով: Հաճախորդը չի կարող գրավ դնել Հաշվին առկա միջոցները՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության: Հաշվին առկա դրամական միջոցները Բանկում գրավադրվելու դեպքում գրավի պայմանագրի կնքման պահից մինչև դրա գործողության ավարտը գրավադրվող չափով համարվում են համապատասխան դեպոզիտային հաշվում պահվող դրամական միջոցներ, ընդ որում Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրի պայմանները՝ դրա գործողության ընթացքում, շարունակում են գործել դեպոզիտային հաշվում պահվող դրամական միջոցների նկատմամբ: Հաշվին առկա դրամական միջոցների գրավի պայմանագրի գործողության ընթացքում դեպոզիտային հաշիվ է համարվում Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրում նշված հաշվեհամարը:
- 3.25. Հաճախորդի Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, որոնց գումարը բավարար է հաշվին ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրսգրման այլ փաստաթղթերը մուտք լինելու

հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

- 3.26. Բանկն անակցեպտ կարգով կարող է Հաշվից դուրսգրել հարկերի և այլ պարտադիր վճարների գումարները, եթե Բանկի համար այդպիսի պարտականություն սահմանված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, դատարանի վճռով և/կամ որոշմամբ, (ներառյալ՝ կատարողական փաստաթղթերի հիման վրա դրամական միջոցների դուրսգրման հայտ (որոշում) ստանալու դեպքում): Հաշիվներով կատարվող գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը արձանագրվում է քաղվածքների ձևով, իսկ քաղվածքում արտացոլված տվյալները համարվում են Հաշվով կատարված գործարքների մասին պատշաճ ծանուցում և Հաճախորդի պահանջով՝ Սակագներով նախատեսված վճարի դիմաց, տրամադրվում է վերջինիս նման պահանջ ներկայացնելու հաջորդ բանկային օրը:
- 3.27. Հաճախորդը պարտավոր է Բանկին ներկայացնել հստակ լրացված կարգադրություններ և իրականությանը համապատասխանող տվյալներ:
- 3.28. Հաճախորդը պարտավորվում է իր Բանկային հաշիվներում առկա միջոցները տնօրինել սույն Պայմաններին և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
- 3.29. Բանկը Բանկային հաշիվներից վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումը և ակցեպտավորումը իրականացնում է համաձայն «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի և Բանկի ներքին իրավական ակտերի: Միաժամանակ Բանկի կողմից լրկալ (ՀՀ տարածքում) վճարման հանձնարարականի չեղարկման հայտ կարող է ընդունվել միայն այն դեպքում, երբ Բանկի կողմից Վճարման հանձնարարականը չի կատարվել: Ընդ որում՝ Վճարման հանձնարարականի չեղարկման հայտ ներկայացվելու դեպքում Վճարման հանձնարարականի կատարման համար Բանկի կողմից գանձված միջնորդավճարը չի վերադարձվում:
- 3.30. Հաճախորդը տեղյակ է այն մասին, որ իր կողմից Բանկային հաշիվներով կատարվող Բանկային գործառնությունների նկատմամբ կարող են կիրառվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ:
- 3.31. Բանկային հաշիվներով իրականացվող գործառնությունների (հաշվարկային/դրամարկղային) դիմաց Բանկը գանձում է համապատասխան միջնորդավճարներ՝ համաձայն Սակագների:
- 3.32. Օրենքով սահմանված կարգով Բանկը ֆիզիկական անձ, այդ թվում անհատ ձեռնարկատեր Հաճախորդին տրամադրում է քաղվածք առնվազն երեսնօրյա պարբերականությամբ, եթե հաշվետու ժամանակահատվածում Հաշիվը դեբետագրվել և/կամ կրեդիտագրվել է: Կողմերն ընդունում են, որ քաղվածքները համարվում են հաստատված Հաճախորդի կողմից, եթե դրանք ստանալուց հետո 10-օրյա ժամկետում Հաճախորդը Բանկին գրավոր առարկություն չի ներկայացնում:
- 3.33. Հաճախորդի համար Բանկում առաջին անգամ հաշիվ բացելիս Բանկը Հաճախորդին տրամադրում է Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին ծանուցումը, որը կիրառելի է նաև Հաճախորդի համար Բանկում հետագայում բացվող բանկային և ավանդային հաշիվների համար: Ընդ որում՝ յուրաքանչյուր անգամ հաշիվ բացելիս Բանկը Հաճախորդին կրկին ծանոթացնում է նշված ծանուցմանը: Բանկը Հաճախորդին ծանուցում է ավանդների հատուցման երաշխավորման պայմաններում և կարգում տեղի ունեցած փոփոխությունների մասին: Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ համաձայն դիմումի փակել Բանկային հաշիվը՝ ամբողջությամբ մարելով Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորությունները: Բանկը կարող է հրաժարվել Բանկային հաշիվը փակելուց, եթե Հաշվի վրա դրված են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արգելանքներ կամ այլ սահմանափակումներ, կամ Հաճախորդն ունի չկատարված պարտավորություններ Բանկի հանդեպ:
- 3.34. Բանկն իրավունք ունի դադարեցնել, կասեցնել և/կամ սահմանափակել այն Հաշիվների սպասարկումը, որոնցով գործառնություններ չեն իրականացվել 12 (տասներկու) օրացուցային ամիս անընդմեջ, ընդ որում, սույն կետի և Պայմաններով սահմանված դրույթների իմաստով հաշվով գործառնություններ չեն

համարվում Բանկի կողմից հաշվի սպասարկման վճարի կամ Բանկի առջև Հաճախորդի այլ պարտավորությունների դիմաց համապատասխան դրամական միջոցների գանձման (հաշվանցի), ինչպես նաև՝ դատարանի վճռի հիման վրա հաշվից միջոցների բռնագանձման դեպքերը: Այդ Հաշիվները կարող են դարձյալ ակտիվացվել Հաճախորդի կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ Սակագներ և դրույքներով նախատեսված վճարները վճարելու պայմանով:

- 3.35. Բանկն իրավունք ունի առանց դատարանի դիմելու միակողմանի փակել Հաճախորդի Հաշիվները, եթե Բանկում բացված Հաճախորդի բոլոր Հաշիվների մնացորդները գրոյական են և դրանցով գործարքներ չեն կատարվել վերջին մեկ օրացուցային տարվա ընթացքում: Ընդ որում, Հաշվով գործարքներ չեն համարվում Բանկի նախաձեռնությամբ կատարված գործարքները՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով միջևորդավճարների գանձումը, տոկոսագումարների վճարումը: Հաճախորդի Հաշվի/Հաշիվների փակման պահից սույն կետի ուժով Դիմում-պայմանագիրը լուծելու մասին Բանկի և Հաճախորդի միջև համաձայնագիրը համարվում է կնքված:
- 3.36. Ընթացիկ հաշիվը փակելու ժամանակ, եթե Հաճախորդի հաշվին առկա է մնացորդ, ապա այն վճարվում է Հաճախորդին, կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշվի՝ Հաճախորդի համապատասխան գրավոր դիմումը ստանալուց ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում:
- 3.37. Հաշիվները ենթակա չեն փակման, եթե՝
 - 3.37.1. Հաճախորդն ունի գործող ժամկետային ավանդի պայմանագիր, և այդ Հաշիվներով կատարվում են Հաճախորդի գործող ժամկետային ավանդային պայմանագրով ավանդի ներդրման, ավանդի տոկոսագումարների վճարման և ավանդային հաշվով այլ գործարքներ, և/կամ
 - 3.37.2. մնացորդ պարունակող Հաճախորդի Հաշվի վրա առկա է արգելանք՝ ՀՎԱԾ-ի, դատարանի կամ հարկային մարմինների որոշումներով, և/կամ
 - 3.37.3. հաշիվը ծանրաբեռնված է գրավով և չկա հաշիվը փակելու վերաբերյալ գրավառուի համաձայնությունը:
- 3.38. Սույն Պայմանների ներքո Հաճախորդը իրավունք ունի Բանկում բացել Առարկայագուրկ մետաղական հաշիվ, որը հնարավորություն է տալիս Հաճախորդին վերոնշյալ հաշվով իրականացնել ոսկով անկանխիկ գործարքներ:
- 3.39. Առարկայագուրկ մետաղական հաշիվը հանդիսանում է ցպահանջ հաշիվ, որը նախատեսված է անկանխիկ ոսկու հաշվառման համար, որի համար նշվում է միայն ոսկու հարգը և կշիռը և չեն նշվում այլ անհատական տվյալներ:
- 3.40. Առարկայագուրկ մետաղական հաշվում հաշվառվում են Հաճախորդին պատկանող մետաղական հաշիվները՝ արտահայտած գրամներով և/կամ տրոյական ունցիաներով: Հաշիվը բացված է համարվում այն համապատասխան չափի անկանխիկ ոսկով համալրելու պահից: Ոսկու մուտքագրման նվազագույն չափը սահմանվում է մուտքագրման պահին գործող Սակագներին համապատասխան:
- 3.41. Առարկայագուրկ մետաղական հաշիվներով իրականացվում է միայն հետևյալ գործառնությունները.
 - 3.41.1. Առարկայագուրկ մետաղական հաշվին մուտքագրում,
 - 3.41.2. Առարկայագուրկ մետաղական հաշվից ելքագրում՝ Առարկայագուրկ մետաղական հաշվում առկա անկանխիկ ոսկին Բանկին վաճառելու միջոցով,
 - 3.41.3. Առարկայագուրկ մետաղական հաշվի համալրում՝ Հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ Բանկում առկա Առարկայագուրկ մետաղական հաշվից ոսկու անկանխիկ փոխանցման միջոցով,
 - 3.41.4. Առարկայագուրկ մետաղական հաշվից ելքագրում՝ Հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ Բանկում առկա Առարկայագուրկ մետաղական հաշվին ոսկու անկանխիկ փոխանցում կատարելու միջոցով:
- 3.42. Առարկայագուրկ մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկու հաշվառումն իրականացվում է ՀՀ դրամով՝ ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից ոսկու համար հայտարարած

հաշվարկային գնով և կշռային արտահայտությամբ՝ արտահայտված գրամներով՝ 0.01 գրամ ճշտությամբ կամ տրոյական ունցիաներով՝ 0.001 տրոյական ունցիա ճշտությամբ: Սույն Պայմանների իմաստով մեկ տրոյական ունցիան հավասար է 31.10348 գրամի:

4. Ավանդներ

- 4.1. Սույն գլուխով սահմանում է Կողմերի միջև Ավանդների ներգրավման կապակցությամբ ծագող պայմանագրային իրավահարաբերությունները:
- 4.2. Սույն Պայմանների համաձայն Հաճախորդը կարող է Բանկում ներդնել ավանդ ավանդի գումարի նկատմամբ տոկոսներ ստանալու պայմանով: Ավանդի ներդրման պայմանները սահմանվում են Բանկի և Հաճախորդի միջև կնքվող Հայտ-պայմանագրով կամ համապատասխան պայմանագրի կնքման համար հիմք հանդիսացող Բանկի կողմից սահմանված այլ տիպային փաստաթղթով (այսուհետ՝ Ավանդային պայմանագիր), որի անբաժանելի մասն են կազմում Պայմանները և տվյալ ավանդատեսակի հատուկ պայմանները:
- 4.3. Հաճախորդն ընդունում է, որ Հեռակառավարման համակարգը հնարավորություն է ընձեռում ավանդ ներդնելու, ավանդի գումարի ավելացում իրականացնելու նպատակով Բանկին դիմել նաև առցանց հարթակում:
- 4.4. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Հեռակառավարման համակարգի միջոցով ավանդ ներդնելու նպատակով համապատասխան էջում ստորագրման ենթակա դաշտերում հավաստող նշում դնելով և/կամ համապատասխան հավաստման կոճակը սեղմելով, ամբողջությամբ համաձայնում է համապատասխան էջում, հղումով և/կամ փաստաթղթում գետեղված պայմանների, տեղեկությունների և այլ դրույթների հետ, ինչը Հաճախորդի համար առաջացնում է իրավունքներ, պարտականություններ և այլ իրավական հետևանքներ, և ունի նույն իրավական նշանակությունը, ինչ ձեռագիր ստորագրված փաստաթուղթը:
- 4.5. Հեռակառավարման համակարգի միջոցով ավանդ ներդնելու նպատակով Հաճախորդի կողմից ներկայացված Ավանդային պայմանագիր կնքելու դիմում-հայտի, կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու առաջարկ-դիմումների էլեկտրոնային տարբերակները, անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթերն ուղարկվում են Հաճախորդի դիմում-հայտում նշած էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ ավանդային հաշվի քաղվածքը հասանելի է Համակարգի համապատասխան էջում:
- 4.6. Մինչև Հայտ-պայմանագրի կնքումը Ավանդատուն պարտավոր է Բանկ ներկայացնել բոլոր այն անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց ցանկը սահմանում է Բանկը: Փաստաթղթերի ցանկին Ավանդատուն կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Ավանդներ» ենթաբաժնի համապատասխան ավանդատեսակի ենթաբաժնում:
- 4.7. Ավանդը կարող է ներդրվել ՀՀ դրամով և արտարժույթով: Արտարժույթների ցանկին, որով հնարավոր է Ավանդ ներդնել, Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Ավանդներ» ենթաբաժնի համապատասխան ավանդատեսակի ենթաբաժնում:
- 4.8. Բանկը ընդունում է Ավանդատուի դրամական միջոցները, որպես Ավանդ և պարտավորվում է Հայտ-պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով Ավանդատուին վերադարձնել Ավանդի գումարը և տոկոսներ վճարել դրանից:
- 4.9. Բանկը հաստատում է Ավանդի փաստացի ներդրումը և/կամ համալրումը Ավանդատուին առձեռն կամ էլեկտրոնային եղանակով տրամադրելով ավանդային հաշվին ավանդի գումարի մուտքագրումը հավաստող փաստաթուղթը կամ այն հասանելի դարձնելով հեռակառավարման համակարգում:
- 4.10. Համալրման հնարավորությամբ Ավանդի գումարը կարող է համալրվել ինչպես Ավանդատուի, այնպես էլ՝ Ավանդատուի անունով երրորդ անձանց կողմից ստացված դրամական միջոցներով: Այս դեպքում

Ավանդատուն Ավանդի հայտ-պայմանագիր կնքելով լիազորում է երրորդ անձանց՝ իր անունից կատարել Ավանդի համալրումներ:

- 4.11. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:
- 4.12. Ավանդները ընդունվում են ինչպես կանխիկ այնպես էլ անկանխիկ եղանակով, ընդ որում անկանխիկ եղանակով Ավանդի ընդունման դեպքում Բանկն իրավունք ունի Ավանդատուի ընթացիկ հաշվից Ավանդի գումարի չափով դրամական միջոցները դուրս գրել և փոխանցել ավանդային հաշվին:
- 4.13. Ավանդների դիմաց հաշվեգրվող տոկոսագումարների վճարումն իրականացվում է ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:
- 4.14. Բանկում ներդրված Ավանդի գումարը Բանկը տնօրինում է ինքնուրույնաբար՝ ապահովելով Պայմաններով սահմանված Ավանդատուի իրավունքները: Ավանդատուն կարող է ցանկացած ժամանակ պահանջել Բանկից վերադարձնել Ավանդի գումարը:
- 4.15. Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում Բանկը պարտավոր է Ավանդատուին տրամադրել քաղվածք համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի:
- 4.16. Բանկը պարտավոր է 5 (հինգ)-օրյա ժամկետում Ավանդատուի պահանջով վերջինիս տրամադրել ավանդային հաշվի քաղվածք՝ քաղվածքի տրամադրման համար վճար սահմանված լինելու դեպքում գանձելով համապատասխան վճարը:
- 4.17. Բանկը Ավանդատուների կողմից չպահանջված կամ չստացված հաշվի քաղվածքները պահպանում է 3 (երեք) տարի:
- 4.18. Ավանդի ներդրման համար Բանկը Ավանդատուի համար բացում է ավանդային հաշիվ, ինչպես նաև Ավանդատուի համապատասխան հայտով՝ ՀՀ դրամով և Ավանդի արժույթով ընթացիկ հաշիվ(ներ), ընդ որում նշված ընթացիկ հաշիվների համար Բանկի կողմից հաշվի սպասարկման միջնորդավճար չի գանձվում: Ավանդի ներդրման նպատակով բացված ընթացիկ հաշիվ(ներ)ը պետք է օգտագործվի միայն տվյալ Ավանդի սպասարկման համար գործարքների կատարման նպատակով:
- 4.19. Ավանդատուն մինչև Պայմանագրի ժամկետի լրանալը կարող է Ավանդի երկարաձգման կամ նոր ժամկետով վերակնքման իրավունքը լիազորել երրորդ անձի՝ Բանկի համապատասխան լիազոր ներկայացուցչի ներկայությամբ և Բանկի տարածքում կազմված և ստորագրված լիազորագրի հիման վրա:
- 4.20. Ավանդատուն Ավանդի և հաշվեգրված տոկոսների տնօրինման իրավունքը կարող է լիազորել այլ անձի լիազորագրի հիման վրա:
- 4.21. Այն դեպքում, երբ Ավանդատուն Ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել Ավանդի գումարը և հաշվարկված տոկոսագումարները, ապա Բանկը Ավանդի գումարը և հաշվարկված տոկոսները փոխանցում է Ավանդատուի Հայտ-պայմանագրում նշված ընթացիկ կամ քարտային հաշվին, եթե այլ բան սահմանված չէ Հայտ-պայմանագրով: Եթե Ավանդատուն Հայտ-պայմանագրում Ավանդի սպասարկման համար ընթացիկ կամ քարտային հաշիվ չի նշել, ապա տոկոսները փոխանցվում են հատուկ այդ նպատակի համար նախօրոք բացված Ավանդի սպասարկման ընթացիկ հաշվին:
- 4.22. Բանկի կողմից Ավանդի գումարը և հաշվեգրված տոկոսագումարները ընթացիկ հաշվին փոխանցելուն հաջորդող օրվանից մինչև ստանալու պահն ընկած ժամանակահատվածի համար կշարունակվեն հաշվարկվել տոկոսագումարներ՝ Բանկի կողմից այդ ժամանակահատվածի ընթացքում ընթացիկ հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքի համար սահմանված սակագներով:
- 4.23. Ավանդատուն կարող է Բանկում ներդնել Ավանդ հոգուտ երրորդ անձի: Ընդ որում, երրորդ անձը կարող է լինել նաև անչափահաս անձ: Երրորդ անձը Ավանդատուի իրավունքներ ձեռք է բերում այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը Բանկի սահմանած ձևանմուշով Բանկ ներկայացնելու պահից, ընդ որում, եթե երրորդ անձը անչափահաս է, ապա նշված պահանջը նա կարող է Բանկ ներկայացնել 18 (տասնութ) տարին լրանալուց հետո, իսկ մինչ այդ՝ նման իրավունքը

վերապահված է անչափահաս անձի օրինական ներկայացուցչին (ներին): Ընդ որում՝ ծնողներից միայն մեկի ներկայանալը բավարար է ավանդային հայտ պայմանագրով սահմանված գործողությունները կատարելու համար: Մինչև երրորդ անձի կողմից Ավանդատուի իրավունքների վրա հիմնված պահանջը Բանկ ներկայացնելը, Ավանդը տնօրինում է Ավանդը ներդնող անձը, ով ստորագրել է Հայտ-պայմանագիրը՝ համաձայն Հատ-պայմանագրով տրված հանձնարարականների և պայմանների:

- 4.24. Մինչև երրորդ անձի կողմից Ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրության մասին արտահայտվելը Ավանդատուն կարող է օգտվել ավանդային հաշվում իր ներդրած դրամական միջոցների Ավանդատուի իրավունքներից:
- 4.25. Բանկը իրավունք ունի հոգուտ երրորդ անձի Ավանդ ներդրվելու դեպքում Ավանդատուից պահանջել երրորդ անձի նույնականացման համար բավարար տեղեկատվության տրամադրում: Գործարքի օրինականության վերաբերյալ կասկածների կամ երրորդ անձին նույնականացնելու անհնարինության դեպքում Բանկն իրավունք ունի իրաժարվել հոգուտ երրորդ անձանց Ավանդի պայմանագիր կնքելուց:
- 4.26. Ավանդատուի նախօրոք տրված կարգադրության հիման վրա Ավանդի ժամկետի լրանալու օրը Ավանդի վերադարձման պահանջ չներկայացվելու դեպքում Ավանդի գումարը կարող է երկարաձգվել տվյալ տեսակի ավանդների համար Բանկում երկարաձգման պահին գործող պայմաններով՝ Ավանդին գումարելով (կամ առանց գումարելու)՝ տվյալ պահին հաշվարկված և չվճարված տոկոսները (ավանդի արժույթից տարբեր արժույթի դեպքում փոխարկելով ավանդի արժույթին այդ պահին Բանկի կողմից որոշված փոխարժեքով): Եթե ավանդի ժամկետի լրանալու օրը Բանկը նույն տեսակի Ավանդ այլևս չի առաջարկում, ապա Ավանդի ժամկետը սույն կետին համապատասխան կարող է երկարաձգվել Բանկի կողմից սահմանված այլ Ավանդի պայմաններին համապատասխան:
- 4.27. Բանկի կողմից Հաճախորդին վճարվող տոկոսագումարները (ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին) ենթակա են հարկման, համաձայն ՀՀ օրենսդրության, ընդ որում Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, համապատասխան եկամտային հարկի գումարները գանձում է Հաճախորդի հաշվեգրված վճարվող տոկոսագումարներից:
- 4.28. Բոլոր այն դեպքերում, երբ ցանկացած որևէ հիմքով վաղաժամկետ լուծվում է Բանկի և Հաճախորդի միջև կնքված Ավանդային պայմանագիրը (ժամկետից շուտ խզում), ապա պայմանագրից բխող և հոգուտ Հաճախորդի հաշվարկված տոկոսի մասով վճարված հարկային պարտավորությունների գումարը չի վերադարձվում Հաճախորդին:
- 4.29. Բանկը պարտավոր է Ավանդատուի առաջին իսկ պահանջով վերադարձնել Ավանդի գումարը: Ավանդատուի պահանջով ժամկետից շուտ Ավանդի գումարը վերադարձվելու դեպքում Բանկը կատարում է վերահաշվարկ, Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները վճարվում են տվյալ պահին վերահաշվարկի համար Բանկի կողմից սահմանված տոկոսադրույքով և Ավանդի գումարից գանձվում է վճարված տոկոսագումարները, եթե Ավանդի տվյալ տեսակի համար Բանկի կողմից այլ պայմաններ նախատեսված չեն:
- 4.30. Բանկը պարտավոր է ապահովել Ավանդի վերաբերյալ գաղտնիությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 4.31. Ավանդի դիմաց տոկոսագումարների հաշվարկը իրականացվում է ավանդային հաշվի փաստացի մնացորդի նկատմամբ այն Բանկ ներդնելու օրվանից սկսած՝ մինչև Ավանդը վերադարձնելու օրվան նախորդող օրը (ավանդադրման օր է համարվում Ավանդատուի անվամբ բացված ավանդային հաշվին դրամային միջոցների փաստացի մուտքագրման օրը): Եթե վճարման օրը հանդիսանում է ոչ աշխատանքային, ապա վճարումը կատարվում է դրան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:
- 4.32. Ավանդի գումարի հատուցումը և հատուցման չափերը երաշխավորված են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով: Երաշխավորվող սահմանաչափերը սահմանված են սույն պայմանների TRM17-0005-09_1 հավելվածով:

	Համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմաններ	TRM17-0005-09 PUB Խմբագրություն: 15 Հաստատված՝ 21.04.2025թ.
--	--	--

- 4.33. Ավանդի պայմանագրի գործողության ընթացքում ավանդային հաշվով Հաշվարկային և դրամարկային գործառնություններ չեն իրականացվում, բացառությամբ ավանդի գումարի ավելացման և նվազեցման գործառնությունների, եթե դրանք նախատեսված են տվյալ ավանդատեսակի համար:
- 4.34. Ավանդի դիմաց տոկոսագումարների հաշվարկը կատարվում է դրա փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով: Ներդրված ավանդի յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկվում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ, իսկ նահանջ տարվա համար 1/366 հարաբերակցությամբ:
- 4.35. Ավանդի պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել ՀՀ օրենսդրության համաձայն իրավասու մարմինների պահանջով Ավանդի գումարի վրա բռնագանձում տարածելու կամ այլ կերպ Ավանդի գումարն ավանդային հաշվից ելքագրելու Բանկի համար պարտադիր պահանջ ստացվելու դեպքերում:
- 4.36. Հեռակառավարման համակարգերով ավանդային պայմանագրի կնքումը իրականացվում է Հեռակառավարման համակարգերի միջոցով ավանդի ներդրման էլեկտրոնային հայտի ներկայացմամբ:
- 4.37. Հեռակառավարման համակարգերի միջոցով ավանդի ներդրման դեպքում Բանկի և Ավանդատուի միջև ավանդային պայմանագրի կնքումը հավաստվում է Ավանդատուի կողմից ավանդի ներդրման էլեկտրոնային հայտի համապատասխան մասում տվյալ ավանդատեսակի վերաբերյալ Բանկի կողմից սահմանված պայմանների ընդունման մասին Ավանդատուի կողմից համապատասխան նշում կատարելով: Ավանդների պայմաններին Ավանդատուները կարող են ծանոթանալ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքի «Ֆիզիկական անձանց» բաժնի «Ավանդներ» ենթաբաժնում:
- 4.38. Ավանդի մուտքը հավաստող փաստաթուղթ է համարվում Ավանդատուի անձնական օգտագործման հեռակառավարման համակարգում գեներացված մուտքը հավաստող էլեկտրոնային փաստաթուղթը:
- 4.39. Այն դեպքում, երբ Ավանդատուն ներկայացրել է հայտ, որը չի համապատասխանում Բանկի կողմից սահմանված ավանդատեսակների տվյալ պահին գործող պայմաններին, ապա Բանկը իրավունք ունի տվյալ հայտը մերժել:
- 4.40. Հեռակառավարման համակարգերի միջոցով նույն գործառնական օրվա ընթացքում ներկայացված ավանդի ներդրման հայտը Բանկի կողմից ընդունվում է ի կատարումն տվյալ գործառնական օրվա ընթացքում և պայմանագիրը համարվում է կողմերի միջև կնքված տվյալ օրը: Գործառնական օրվա ավարտից հետո ներկայացված ավանդային հայտերի պայմանագրերը համարվում են կնքված հաջորդ գործառնական օրը:
- 4.41. Ավանդային պայմանագրի կնքման համապատասխան էլեկտրոնային հաստատումները Հաճախորդի և Բանկի կողմից իրավաբանորեն հավասարազոր են թղթային եղանակով Ավանդի պայմանագրի կնքմանը և հանդիսանում են Ավանդի պայմանագրի կնքման փաստը հաստատող փաստաթղթեր: Ընդ որում՝ Ավանդի պայմանագրի գրավոր ձևը համարվում է պահպանված համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 2-րդ կետի:
- 4.42. Հեռակառավարման համակարգերի միջոցով կնքված ավանդային պայմանագրերի և դրանց հաստատումների պահպանումը իրականացվում է էլեկտրոնային կարգով՝ Բանկի տվյալների շտեմարանում:
- 4.43. Հաճախորդն իրավունք ունի Բանկի Գործունեության վայրից թղթային ձևով ստանալ Հեռակառավարման համակարգերով ներդրված Ավանդային Հայտ-պայմանագրի, Ավանդի մուտքագրումը հավաստող փաստաթղթի (վճարման հանձնարարական կամ հիշարար օրդեր) իր օրինակները, ինչպես նաև ավանդային հաշիվների քաղվածքները:

5. Պահատուփերի վարձակալություն

- 5.1. Սույն գլուխը սահմանում է անհատական պահատուփից (այսուհետ՝ Պահատուփ) օգտվող հաճախորդ(ներ)ի, իսկ Բանկը և Հաճախորդը միասին՝ Կողմեր) և Բանկի՝ որպես պահատվության

ծառայության մատուցողի փոխհարաբերությունների պայմանները, ինչպես նաև վարձակալած Պահատուփի օգտագործման կանոնները:

- 5.2. Բանկում Պահատուփ վարձակալելու նպատակով Հաճախորդը Բանկին է ներկայացնում Բանկի սահմանած ձևանմուշով Հայտ-պայմանագիր, որում նշվում է վարձակալության պայմանները: Պահատուփի վարձակալության Հայտ-պայմանագիրը կարող է ներկայացվել ինչպես Բանկի Գործունեության վայրում, այնպես էլ Հեռակառավարման համակարգերի միջոցով:
- 5.3. Պահատուփը վարձակալությամբ տրամադրվում է Պահատուփերի վարձակալության համար Բանկի սահմանված Սակագներով՝ [«Սակագների և դրույքների» \(TRM14-0002-02/1\)](#), որը հանդիսանում է սույն Պայմանների անբաժանելի մաս և որին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Այլ» բաժնի «Անհատական պահատուփեր» ենթաբաժնում: Պայմանների իմաստով՝ Հայտ-պայմանագրով ներկայացված հանձնարարականներն ու ընտրված պայմանները կիրառելի են դրանց հետագա բոլոր փոփոխություններով:
- 5.4. Բանկը Պահատուփերը տրամադրում է Հաճախորդներին՝ վերջիններիս համար արժեք ներկայացնող իրերի (դրամ, արժեթղթեր, թանկարժեք մետաղներ և քարեր, ոսկերչական իրեր, արվեստի գործեր, ֆոտո և տեսաժապավեններ, մագնիսական կրիչներ և այլ իրերի) պահպանման նպատակով:
- 5.5. Հաճախորդը կարող է օգտագործել Պահատուփը այնպիսի գույք պահելու համար, որը սեփականության իրավունքով օրինական հիմքերով պատկանում է Հաճախորդին, ազատ է երրորդ անձանց իրավունքներից, որևէ սահմանափակումից կամ կախվածից: Սույն կետում նշված պահանջից բացառություն է կազմում այն դեպքը, երբ Հաճախորդը ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված գրավատուն է և/կամ վարկային կազմակերպություն է, և այս դեպքում վերջինս կարող է Պահատուփում պահել միայն այնպիսի գույք, որն իր տիտղոսային տիրապետման ներքո է անցել և գտնվում օրինական ձևով:
- 5.6. Խստիվ արգելվում է Պահատուփերում պահել թունավոր, ռադիոակտիվ, պայթուցիկ նյութեր, թմրանյութեր, զենք և զինամթերք, մագնիսական դաշտի վրա ազդող առարկաներ, սննդամթերք, սերմեր, կենդանիներ, գողացված՝ ապօրինի ձեռք և այլ հանցավոր գործունեության հետ կապված, ինչպես նաև այլ՝ օրենքով արգելված տեսակի գույք:
- 5.7. Բանկը պարտավորվում է ապահովել Պահատուփերի անվտանգությունը, անխաթարությունը, անձեռնմխելիությունը և գաղտնիությունը հատուկ պայմաններով և անվտանգության միջոցներով հագեցած:
- 5.8. Հաճախորդը կարող է պահասենյակ մուտք գործել միայն Բանկի պատասխանատու աշխատակցի ուղեկցությամբ՝ ներկայացնելով Պահատուփի բանալին: Պահատուփից օգտվելու համար Բանկը Հաճախորդին տրամադրում է Պահատուփի բանալին: Պահատուփը փակվում է 2 բանալով, որոնցից մեկը Բանկը տրամադրում է Հաճախորդին, իսկ մյուսը պահվում է Բանկում: Պահատուփը հնարավոր է բացել 2 բանալիների միաժամանակ կիրառմամբ:
- 5.9. Հաճախորդը, ինչպես նաև վերջին(ներ)իս լիազորված անձը(անձինք)/ ներկայացուցիչ(ներ)ը իրավունք չունեն Պահատուփից օգտվել որևէ երրորդ անձի ուղեկցությամբ:
- 5.10. Հաճախորդի մասնակի կամ լրիվ իրավահաջորդության կամ ժառանգության դեպքում իրավահաջորդի կամ ժառանգի իրավունքները առաջանում են ՀՀ օրենսդրության համաձայն:
- 5.11. Հաճախորդին չի թույլատրվում Պահատուփի բանալու կրկնօրինակ պատրաստել:
- 5.12. Հաճախորդին չի թույլատրվում լուսանկարել կամ տեսագրել Պահատուփը կամ պահասենյակը:
- 5.13. Հաճախորդը կամ նրա կողմից պատշաճ լիազորված անձը Պահատուփից կարող է օգտվել Բանկի կողմից սահմանված գործառնական օրերին և ժամերին:
- 5.14. Հաճախորդը իր յուրաքանչյուր այցելություն ժամանակ պահասենյակում կարող է գտնվել առավելագույնը 15 (տասնհինգ) րոպե:

- 5.15. Պահատուկների վարձակալության դիմաց վճարվող միջնորդավճարի չափը կախված է Պահատուկի չափից և վարձակալության ժամկետից՝ համաձայն Բանկի կողմից հաստատված Սակագների: Սակագներին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Պահատուկներ» ենթաբաժնում:
- 5.16. Պահատուկներում արժեքների պահպանումը կատարվում է առանց Բանկի կողմից նրա պարունակության ստուգման:
- 5.17. Մեկ Պահատուկի Հայտ-պայմանագիրը կարող են ստորագրել մեկից ավել Հաճախորդներ: Այս դեպքում Հաճախորդները համատեղ համաձայնությամբ Հայտ-պայմանագրում սահմանում են Պահատուկի տնօրինման կարգը, որը դիտվում է որպես Հաճախորդի կողմից Բանկին տրված հանձնարարական և կարող է լինել հետևյալ տարբերակներից մեկը՝
- 5.17.1. Պահատուկը տնօրինում են Հայտ-պայմանագիրը ստորագրած Հաճախորդներից յուրաքանչյուրը առանձին և առանց որևէ սահմանափակման, և այս դեպքում Հաճախորդներից յուրաքանչյուրն առանձին իրավունք ունի կատարել Պահատուկի հետ կապված ցանկացած գործողություն, ներառյալ՝ Հայտ-պայմանագրով ընտրված պայմանների հետագա փոփոխությունները և պահատվության ծառայության դադարեցումը
- 5.17.2. Ընդհանուր համաձայնությամբ տնօրինելու իրավասությամբ: Որի դեպքում Պահատուկի տնօրինումը, ինչպես նաև Հայտ-պայմանագրով սահմանված պայմանների փոփոխությունը և Հայտ-պայմանագրի դադարեցումը պետք է իրականացվի Հայտ-պայմանագրի կողմ հանդիսացող բոլոր Հաճախորդների կողմից համատեղ կամ մնացած Հաճախորդների համաձայնությամբ:
- Համատեղ օգտագործման իրավունքով Պահատուկի Հայտ-պայմանագիրը պետք է ստորագրվի համատեղ օգտագործման իրավունք ունեցող բոլոր Հաճախորդների կողմից՝ նշելով համատեղ օգտագործման եղանակը:
- 5.18. Պայմանագրի գործողության ընթացքում Հաճախորդի կողմից Պահատուկի բանալու կորստի, Պահատուկին պատճառված ցանկացած վնասի, ներառյալ՝ այդ պատճառով առաջացած տեխնիկական միջամտությունը, ինչպես նաև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտին բանալին չվերադարձնելու դեպքում (նշված դեպքերի փաստը հավաստվում է Հաճախորդի կողմից ներկայացված դիմումի հիման վրա) Հաճախորդը պարտավոր է վճարել Բանկին՝ [«Սակագների և դրույքների» \(TRM14-0002-02/1\)](#)-ով նախատեսված համապատասխան վճարները: Տվյալ դեպքում Պատասխանատուն Հաճախորդին տեղեկացնում է, որ Պահատուկի պարունակությունը ենթակա չէ վերադարձման այնքան ժամանակ, քանի դեռ Հաճախորդը չի հատուցել իր կողմից պատճառած վնասները:
- 5.19. Հաճախորդն իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել պայմանագիրը՝ վճարելով Պահատուկի օգտագործման հետևանքով առաջացած բոլոր պարտավորությունները և ներկայացնելով համապատասխան դիմում և պահատուկի բանալին: Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում գանձված սակագինը ենթակա չէ վերադարձման:
- 5.20. Հայտ-պայմանագրում/Պայմանագրում ուղղակիորեն նշված՝ պահատուկի պայմանների հետագա փոփոխությունների մասին Հաճախորդի հանձնարարականը ներկայացվում է Բանկի սահմանված ձևանմուշով և այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև այդ նույնանման հարցին վերաբերող հանձնարարականները համարվում են ուժը կորցրած:
- 5.21. Պահատուկից օգտվելու ծառայության վճարն առաջին անգամ Հաճախորդը կատարում է Հայտ-պայմանագրի/Պայմանագրի ստորագրման ժամանակ, իսկ հաջորդ վճարումները յուրաքանչյուր երկարաձգման ժամանակահատվածի սկզբում՝ կանխավճարային կարգով:
- 5.22. Բանկը կարող է Հաճախորդին ծանուցելով Հայտ-պայմանագրում/Պայմանագրում նշված պահատվության ծառայության ժամկետի ավարտից հետո այն երկարաձգել Հայտ-պայմանագրում/Պայմանագրում նշված նույն ժամկետով՝ համաձայն Բանկում այդ պահին գործող

Սակագների: Ժամկետը ենթակա է ինքնաբերաբար երկարաձգման յուրաքանչյուր անգամ ժամկետը լրանալուց հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը մինչև ժամկետը լրանալը ներկայացրել է Պահատուփի ծառայությունից օգտվելու դադարեցման դիմում:

- 5.23. Բանկի կողմից Պահատուփերի վարձակալության Պայմանագիրը/Հայտ-պայմանագիրը կարող է առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու միակողմանիորեն լուծվել հետևյալ դեպքերում
- 5.23.1. Եթե Հաճախորդը Հայտ-պայմանագրի/Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո երեք ամիս շարունակ չի վճարում ծառայության վճարը (Հաճախորդի բանկային հաշիվների միջոցները չեն բավարարում վարձավճարը գանձելու համար), չի երկարաձգում պայմանագրի գործողության ժամկետը և չի վերադարձնում Պահատուփի բանալին,
 - 5.23.2. Պայմանագրով և/կամ Բանկի կողմից հրապարակված պայմաններով սահմանված այլ դեպքերում,
 - 5.23.3. ՀՀ օրենսդրության համաձայն Պահատուփի պարունակության առգրավման/բռնագրավման դեպքում,
- 5.24. Պայմանագիրը/Հայտ-պայմանագիրը լուծվում է՝ այդ մասին 15 օր առաջ ծանուցելով Հաճախորդին:
- 5.25. Բանկը կարող է առանց Հաճախորդի համաձայնության և ներկայության բացել Պահատուփը հետևյալ դեպքերում
- 5.25.1. ՀՀ Օրենսդրության համաձայն՝ դատարանի վճռի առկայության դեպքում, ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության կամ պետական այլ իրավասու մարմնի որոշման հիման վրա:
 - 5.25.2. Եթե Պայմանագրով/Հայտ-պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո Հաճախորդը չի ազատել Պահատուփը և բանալին չի վերադարձրել Բանկին:
 - 5.25.3. Եթե Հաճախորդը Հայտ-պայմանագրի/Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո երեք ամիս շարունակ չի վճարում ծառայության վճարը (Հաճախորդի բանկային հաշիվների միջոցները չեն բավարարում վարձավճարը գանձելու համար), չի երկարաձգում պայմանագրի գործողության ժամկետը և չի վերադարձնում Պահատուփի բանալին,
 - 5.25.4. Եթե ի հայտ է եկել անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած դեպքեր, այդ թվում՝ հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, վթար և այլն:
 - 5.25.5. Բանկի կողմից առկա են հիմնավոր կասկածներ առ այն, որ Պահատուփում առկա են ՀՀ օրենսդրությամբ և սույն Կարգով սահմանված արգելված իրեր:
 - 5.25.6. Եթե Պահատուփի Պայմանագրով/Հայտ-պայմանագրով սահմանված ժամկետն ավարտվել է և Պայմանագրի ավարտի օրվանից 15 օրացույցային օրվա ընթացքում Հաճախորդը չի ազատել Պահատուփը:
 - 5.25.7. Եթե Բանկի կողմից միակողմանիորեն լուծվում է Պահատուփի վարձակալության պայմանագիրը:
 - 5.25.8. Պայմանագրով և/կամ Բանկի կողմից հրապարակված պայմաններով սահմանված այլ դեպքերում:
- 5.26. Հաճախորդի մահվան դեպքում Բանկի կամ շահագրգիռ անձի դիմումով Նոտարի կողմից կարող է իրականացվել պահատուփի բացում և գույքագրում: Պահատուփի բացման գործընթացն իրականացվում է համաձայն 10.05.2022թ.-ի թիվ 06 Խորհրդի արձանագրությամբ հաստատված «Բանկում Չիրկիզվող անհատական պահատուփերի վարձակալության» կարգի (ներառյալ հետագա փոփոխությունները): Նոտարի կողմից գույքագրված դրամական միջոցները մուտք են արվում Նոտարի դեպոզիտ հաշվին, իսկ Պահատուփի իրերը տեղափոխվում են Բանկում ի պահի համար նախատեսված այլ տարածք:
- 5.27. Հայտ-պայմանագրով սահմանված ժամկետներում վարձակալված Պահատուփի վարձավճարը երեք ամիս շարունակ չվճարելու և պայմանագրի ժամկետի ավարտին բանալին չվերադարձնելու դեպքում, Բանկն իրեն իրավունք է վերապահում առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու միակողմանիորեն լուծելու պայմանագիրը՝ ազատելով Պահատուփը, և Հաճախորդի կողմից

վարձակալած չիրկիզվող Պահատուփի պարունակությունը Բանկում առնվազն 4 անդամից ստեղծված հանձնաժողովի և անվտանգության համակարգերի ներկայացուցչի (որը կփոխի փականը և բանալին) կողմից տեղափոխել Բանկում ի պահի համար նախատեսված այլ տարածք:

6. Վճարային քարտեր

- 6.1. Սույն գլուխը սահմանում է Կողմերի միջև Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման կապակցությամբ ծագող պայմանագրային հարաբերությունները:
- 6.2. Սույն Պայմանների համաձայն Հաճախորդը իրավունք ունի պատվիրել Վճարային քարտ: Վճարային քարտերը կարող են պատվիրվել Բանկի Գործունեության վայրում, Հեռակառավարման համակարգերի միջոցով, Բանկի պաշտոնական կայքի միջոցով, ինչպես նաև Բանկի հետ համագործակցող գործընկերների կայքերի կամ հավելվածների միջոցով:
- 6.3. Վճարային քարտը տրամադրվում է տվյալ տեսակի Վճարային քարտի համար սահմանված Ծառայության պայմաններով և Սակագներով, որոնք հանդիսանում են սույն Պայմանների անբաժանելի մաս և որոնց Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Քարտեր» ենթաբաժնում և «Սակագներ» բաժնի «Քարտեր» ենթաբաժնում:
- 6.4. Բանկը Հաճախորդներին տրամադրում է «ArCa» լոկալ, «Visa», «MasterCard» և «Union Pay» միջազգային վճարային համակարգերի Վճարային Քարտեր:
- 6.5. Քարտային հաշիվները բացվում և վարվում են ՀՀ դրամով և արտարժույթով: Արտարժույթների ցանկին, որով հնարավոր է բացել Քարտային հաշիվ Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Քարտեր» ենթաբաժնում:
- 6.6. Բանկի Գործունեության վայրում Վճարային քարտի պատվիրումը իրականացվում է Բանկի կողմից սահմանված Վճարային քարտի տրամադրման Հայտ-պայմանագրի հիման վրա: Հայտ-պայմանագրի հետ Հաճախորդը Բանկ է ներկայացնում նաև բոլոր այն անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց ցանկը սահմանում է Բանկը: Փաստաթղթերի ցանկին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Քարտեր» ենթաբաժնում:
- 6.7. Քարտապանը պարտավոր է Վճարային քարտով կանխիկ միջոցների ստացումը և բոլոր տեսակի վճարումները իրականացնել Բանկի կողմից սահմանված վճարային սահմանաչափի սահմաններում:
- 6.8. Բանկն իրավունք ունի Քարտապանի կողմից ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմաններով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում դադարեցնել Վճարային քարտի սպասարկումը՝ այդ մասին 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր տեղեկացնելով Քարտապանին և պահանջել Քարտապանին վճարել բանկին վճարման ենթակա բոլոր գումարները:
- 6.9. Բանկն իրավունք ունի փոխել Վճարային քարտերի օգտագործման և սպասարկման պայմանները, Վճարային քարտի սպասարկման սակագները՝ այս մասին 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր տեղեկացնելով Քարտապանին:
- 6.10. Բանկն իրավունք ունի Քարտապանի կողմից Բանկին վճարման ենթակա գումարներն անակցեպտ կարգով գանձել քարտային հաշվից, առկայության դեպքում չնվազող մնացորդի հաշվից՝ անբավարարության դեպքում Քարտապանի Բանկում բացված այլ հաշիվներից:
- 6.11. Քարտապանի քարտային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ համաձայն Բանկի սակագների, որոնց Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքի «Սակագներ» բաժնի «Ընթացիկ հաշիվներ» ենթաբաժնում:
- 6.12. Քարտապանը պարտավոր է չգերազանցել Վճարային քարտի վճարային սահմանաչափը, իսկ գերազանցելու դեպքում պետք է անմիջապես վերականգնի այն:
- 6.13. Հեռակառավարման համակարգերի միջոցով Վճարային քարտի պատվիրումը իրականացվում է Հեռակառավարման համակարգերով Հաճախորդի ներկայացրած էլեկտրոնային Հայտ/Դիմում-ի հիման

վրա, որի համար կիրառվում է սույն Պայմանագրով սահմանված Հաճախորդի հավաստագրման և նույնականացման միջոցները:

- 6.14. Վճարային քարտը Հաճախորդը ստանում է Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի և Հաճախորդի միջև պայմանավորված այլ եղանակով:
- 6.15. Վճարային քարտերով գործառնությունների իրականացման դեպքում Հաճախորդը պարտավոր է պահպանել սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող «Քարտերի տրամադրման և օգտագործման» պայմանները, որը հասանելի է Բանկի պաշտոնական կայքի «Քարտեր» բաժնի «Քարտերի տրամադրում և սպասարկում» ենթաբաժնում և Բանկի Գործունեության վայրում:
- 6.16. Քոբրենդային Gift Card և Evoca Gift Card համարվում են վավերական Քարտի դիմերեսին նշված ժամկետի սահմաններում: Քարտերի լիցքավորումն իրականացվում է Բանկի վճարային տերմինալների, ինչպես նաև Telcell, EasyPay, Idram, Fast Shift և այլ վճարային տերմինալների միջոցով (վճարային տերմինալների ցանկը կարող է փոփոխվել, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է բանկի պաշտոնական կայք էջում), ընդ որում Բանկի վճարային տերմինալի միջոցով լիցքավորում իրականացնելիս, Բանկը լիցքավորման համար միջնորդավճար չի գանձում: Քարտերից հնարավոր չէ կատարել կանխիկացում: Քարտերի մնացորդի նկատմամբ Բանկի կողմից տոկոսագումարներ չեն վճարվում: Քարտի գործողության ժամկետի ավարտի կամ Քարտի կորստի դեպքում Քարտը վերաթողարկման ենթակա չէ: Քարտի ակտիվացման ժամանակ Հաճախորդի այլ բանկային հաշիվների վրա արգելանք լինելու դեպքում, արգելանք է դրվելու նաև ակտիվացված Քոբրենդային Gift Card կամ Evoca Gift Card հաշիվների նկատմամբ:
- 6.17. Քոբրենդային Gift Card նվեր ստացող անձը պարտավոր է համագործակցող ընկերություն ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ կնքելով Վճարային քարտի պատվիրման հայտ-պայմանագիր:
- 6.18. Evoca Gift Card նվեր ստացող անձը քարտը կարող է ակտիվացնել Evoca Touch հավելվածի միջոցով, ինչպես նաև Բանկի գլխամասային գրասենյակ կամ Բանկի մասնաճյուղ այցելելով:

7. Վճարային Թվային քարտեր

- 7.1. Սույն գլուխը սահմանում է Կողմերի միջև Վճարային թվային քարտերի տրամադրման և սպասարկման կապակցությամբ ծագող պայմանագրային հարաբերությունները:
- 7.2. Վճարային թվային քարտերով գործառնությունների իրականացման դեպքում Հաճախորդը պարտավոր է պահպանել սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող «Քարտերի տրամադրման և օգտագործման» պայմանները, որը հասանելի է Բանկի պաշտոնական կայքի «Քարտեր» բաժնի «Քարտերի տրամադրում և սպասարկում» ենթաբաժնում և Բանկի Գործունեության վայրում:
- 7.3. Սույն Պայմանագրի համաձայն Հաճախորդը իրավունք ունի Evoca Touch բջջային/մոբայլ հավելվածով պատվիրել Վճարային թվային, ինչպես նաև Digital Gift Card քարտ:
- 7.4. Վճարային թվային քարտը տրամադրվում է տվյալ տեսակի Վճարային քարտի համար սահմանված Ծառայության պայմաններով և Սակագներով, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մաս և որոնց Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «Անհատ» բաժնի «Քարտեր» և «Սակագներ» ենթաբաժնում:
- 7.5. Բանկը Հաճախորդներին տրամադրում է «Visa» և «MasterCard» միջազգային վճարային համակարգի Վճարային թվային քարտեր:
- 7.6. Թվային Քարտային հաշիվները բացվում և վարվում են ՀՀ դրամով և արտարժույթով: Արտարժույթների ցանկին, որով հնարավոր է բացել Թվային Քարտային հաշիվ Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքում և/կամ EvocaTOUCH հավելվածում:

	Համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմաններ	TRM17-0005-09 PUB Խմբագրություն: 15 Հաստատված՝ 21.04.2025թ.
--	--	--

- 7.7. Քարտապանը պարտավոր է Վճարային թվային քարտով բոլոր տեսակի վճարումները իրականացնել Բանկի կողմից սահմանված վճարային սահմանաչափի սահմաններում:
- 7.8. Բանկն իրավունք ունի փոխել Վճարային թվային քարտերի օգտագործման և սպասարկման պայմանները, Վճարային թվային քարտի սպասարկման սակագները՝ այս մասին 15 (տասնհինգ) օր առաջ տեղեկացնելով Քարտապանին:
- 7.9. Բանկն իրավունք ունի Քարտապանի կողմից Բանկին վճարման ենթակա գումարներն անակցեպտ կարգով գանձել քարտային հաշվից՝ անբավարարության դեպքում Քարտապանի Բանկում բացված այլ հաշիվներից:
- 7.10. Քարտապանի քարտային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ համաձայն Բանկի սակագների, որոնց Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքի «Սակագներ» բաժնում:
- 7.11. Քարտապանը պարտավոր է չգերազանցել Վճարային թվային քարտի վճարային սահմանաչափը, իսկ գերազանցելու դեպքում պետք է անմիջապես վերականգնի այն:
- 7.12. EvocaTOUCH հավելվածի միջոցով Վճարային քարտի պատվիրումը իրականացվում է Հաճախորդի ներկայացրած էլեկտրոնային Հայտ/Դիմում-ի հիման վրա, որի համար կիրառվում է սույն Պայմանագրով սահմանված Հաճախորդի հավաստագրման և նույնականացման միջոցները:
- 7.13. Թվային Քարտի պատվիրումից հետո Հավելվածը գնեցնում է Թվային քարտ և ձևավորվում է դրա Վիրտուալ պատկերը: Վճարային թվային քարտով իրականացվող գործառնությունների արտացոլման նպատակով Քարտապանի անվամբ բացվում է քարտային հաշիվը, որն արտացոլվում է EvocaTOUCH հավելվածում:
- 7.14. Հաճախորդը պետք է Թվային քարտն ավելացնի ApplePay/G Pay դրամապանակներին, որից հետո հնարավորություն կունենա կատարել անհպում վճարումներ:

8. Հեռակառավարման համակարգեր

- 8.1. Սույն գլուխը սահմանում է Կողմերի միջև Հեռակառավարման համակարգերի կիրառման կապակցությամբ ծագող ծառայությունների մատուցման և պայմանագրային հարաբերությունները:
- 8.2. Սույն Պայմանագրի համաձայն Հաճախորդը իրավունք ունի օգտվել Բանկի կողմից տրամադրվող Հեռակառավարման համակարգերից:
- 8.3. Հաճախորդին Հեռակառավարման համակարգեր տրամադրվում է Հեռակառավարման համակարգերի համար Ծառայության պայմաններով և Սակագներով, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մաս և որին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի Գործունեության վայրում կամ Բանկի պաշտոնական կայքի «EvocaTOUCH և EvocaOnline» ենթաբաժնում:
- 8.4. Հաճախորդի համալիր Բանկային սպասարկումը կարող է իրականացվել Հեռակառավարման համակարգերի միջոցով՝ առանց Հաճախորդի Բանկ այցելության:
- 8.5. Հաճախորդը Հեռակառավարման համակարգերի միջոցով կարող է դիտել իր հաշիվների շարժը, կատարել փոխանցումներ, կատարել վճարումներ, վարկերի մարումներ, ստանալ տեղեկատվություն, ներկայացնել հայտեր, ներդնել ավանդներ և կատարել բոլոր այն գործառնությունները, որոնք հասանելի կլինեն տվյալ Հեռակառավարման համակարգերով:
- 8.6. Հեռակառավարման համակարգերի նկարագրին և հնարավորություններին, դրանց ակտիվացման և անվտանգության միջոցների ապահովման կարգին, ինչպես նաև օգտագործման համար գանձվող

միջնորդավճարներին (համաձայն Սակագների) Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքում կամ Բանկի գործունեության վայրում:

- 8.7. Հեռակառավարման համակարգերը տրամադրվում են Հաճախորդին՝ «Միայն դիտելու» կամ «Դիտելու և գործարքներ կատարելու» հնարավորությամբ:
- 8.8. Հեռակառավարման համակարգերը «Դիտելու և գործարքներ կատարելու» հնարավորությամբ կիրառելու համար Հաճախորդը Բանկ է ներկայացնում ձևանմուշին համապատասխան լրացված Հայտ/Դիմում:
- 8.9. Հաճախորդի կողմից Հեռակառավարման համակարգերից օգտվելու համար Բանկի կողմից սահմանված ձևով Հայտ/Դիմում-ի ներկայացումը և դրա ընդունումը Բանկի կողմից նշանակում է, որ Հաճախորդը ընդունել է սույն Պայմանագրերը և ծանոթացել է Հեռակառավարման համակարգերից օգտվելու պայմաններին և կանոններին:
- 8.10. Հաճախորդի կողմից Հեռակառավարման համակարգերի օգտագործման ժամանակ Բանկն իրականացնում է Հաճախորդի նույնականացում և Հավաստագրում, որի համար Բանկն իրավունք ունի Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները հավաքագրել օրենքով չարգելված ցանկացած այլ աղբյուրներով և եղանակներով:
- 8.11. Հաճախորդը պատասխանատու է Հեռակառավարման համակարգերով գործառնություններ իրականացնելու ժամանակ էլեկտրոնային և այլ հայտերի, փաստաթղթերի ճիշտ և լրիվ լրացման համար: Բանկն իրավունք ունի չիրականացնել ոչ լրիվ լրացված կամ թերի լրացված վավերապայմաններով Հաճախորդի ներկայացրած հայտերը և/կամ հանձնարարականները:
- 8.12. Հեռակառավարման համակարգերից օգտվելու համար Բանկի կողմից Հաճախորդին կարող են տրամադրվել անհրաժեշտ սարքավորումներ, ծրագրային ապահովումներ, գաղտնաբառեր, բանալիներ, որոնք հանդիսանում են Բանկի սեփականությունը և պետք է օգտագործվեն Բանկի կողմից սահմանված եղանակով:
- 8.13. Հաճախորդն ընդունում և համաձայն է, որ Հեռակառավարման համակարգեր մուտք գործելու, ինչպես նաև էլեկտրոնային հայտեր, դիմումներ և պայմանագրեր կնքելու համար իր կողմից գաղտնաբառերի կիրառումը իրավաբանորեն համարժեք է թղթային փաստաթղթերի վրա դրված ձեռագիր ստորագրությանը և իրավունք չունի ծառայության գաղտնաբառը տրամադրել կամ հայտնի դարձնել երրորդ անձանց և պարտավոր է անհապաղ հայտնել Բանկին գաղտնաբառի՝ այլ անձանց հայտնի դառնալու և/կամ կորստի մասին: Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ կորստի, վնասի համար, որն առաջացել է գաղտնաբառը Հաճախորդի կողմից հեռախոսակապի միջոցով Բանկին հայտնելու հիմքով Հաճախորդին ծառայություններ մատուցելու արդյունքում, անկախ նրանից, թե Բանկը տեղյակ է կորստի կամ վնասի հնարավորության մասին, թե՛ ոչ:
- 8.14. Բանկը կարող է մերժել Հեռակառավարման համակարգերով գործառնության իրականացումը, եթե Հաճախորդի նույնականացման և հավաստագրման տվյալները չեն համընկնում Բանկի տվյալների շտեմարանում առկա տվյալների հետ:
- 8.15. Բանկն իրավունք ունի կասեցնել կամ մերժել Հեռակառավարման համակարգերի միջոցով ներկայացված գործարքի հայտը՝ մինչև Բանկին բավարարող լրացուցիչ տեղեկատվության և/կամ փաստաթղթերի ներկայացնելը: Հաճախորդի հանձնարարականները կատարելու ժամանակ լրացուցիչ հաստատում ստանալու նպատակով Բանկը իրավունք ունի հետադարձ կապ հաստատել Հաճախորդի հետ վերջինիս՝ Բանկում գրանցված հեռախոսահամարներից որևէ մեկով:
- 8.16. Բանկը պատասխանատվություն չի կրում ինտերնետի և կապի այլ միջոցների կիրառմամբ օպերատորների կողմից իրենց մատուցած ծառայությունների դիմաց Հաճախորդից գանձված վճարների համար:

	Համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմաններ	TRM17-0005-09 PUB Խմբագրություն: 15 Հաստատված՝ 21.04.2025թ.
--	--	--

- 8.17. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների համար, որոնք առաջացել են Հաճախորդի կողմից անփութության կամ անշրջահայացության պատճառով Հեռակառավարման համակարգերի տվյալները և գաղտնաբառերը կորցնելու, ինչպես նաև դրանք երրորդ անձանց հայտնի դարձնելու հետևանքով:
- 8.18. Հաճախորդը պարտավոր է անհապաղ Բանկին տեղեկացնել իրեն տրամադրված սարքերի կորստի կամ վնասվածքի և/կամ Հաճախորդի նույնականացման և հավաստագրման տվյալները երրորդ անձանց հայտնի դառնալու փաստի մասին:
- 8.19. Հաճախորդը պարտավոր է Հեռակառավարման համակարգերը օգտագործել բացառապես դրանց նպատակային նշանակությանը համապատասխան:
- 8.20. Հաճախորդը պարտավոր է պահպանել Հեռակառավարման համակարգերի ծրագրային ապահովումների հետ կապված բոլոր հեղինակային իրավունքները:
- 8.21. Բանկն իրավունք ունի, անվտանգության և ապահովության նկատառումներից ելնելով, Հեռակառավարման համակարգերով իրականացվող գործառնությունների համար սահմանել սահմանափակումներ և սահմանաչափեր, ինչպես նաև կախված գործառնության սահմանաչափից՝ կիրառել հավելյալ նույնականացման և հավաստագրման միջոցառումներ:
- 8.22. Հաճախորդի ինքնության, Հեռակառավարման համակարգերի անօրինական օգտագործման, անվտանգության պահանջների խախտման, զեղծարարության վտանգի կամ բանկային գործառնության օրինականության վերաբերյալ կասկած ունենալու, ինչպես նաև Հեռակառավարման համակարգերի օգտագործման դիմաց Հաճախորդի կողմից վճարներ չիրականացնելու դեպքում, Բանկն իրավունք ունի միակողմանիորեն կասեցնել կամ դադարեցնել Հաճախորդի հետ գործարար հարաբերությունները և/կամ Հեռակառավարման համակարգերով սպասարկումը:
- 8.23. Հեռակառավարման համակարգերից օգտվելու դեպքում Հաճախորդը պարտավոր է պահպանել սույն Պայմանների անբաժանելի մաս հանդիսացող «EvocaTOUCH» և «EvocaOnline» համակարգի օգտագործման կանոնները, որը հասանելի է Բանկի պաշտոնական կայքում և Բանկի Գործունեության վայրում:

9. Այլ պայմաններ

- 9.1. Բանկն իրավունք ունի միակողմանի փոփոխել և լրացնել սույն Պայմանները, Սակագներ և Դրույքները, այդ թվում՝ Նոր խմբագրությամբ հաստատել սույն Պայմանները, Սակագներ և Դրույքները, դրանց մասին Հաճախորդին ծանուցելով սույն Պայմաններով սահմանված կարգով:
- 9.2. Բանկը տեղեկացնում է Հաճախորդին սույն Պայմաններում փոփոխություններ և լրացումներ կատարելու, Նոր խմբագրությամբ Պայմանները հաստատելու մասին սույն Պայմաններով նշված միջոցներից մեկով:
- 9.3. Պայմանները, Սակագներ և Դրույքները, ինչպես նաև՝ բանկային ծառայություններին վերաբերող ուղեցույցները, հավելվածները և այլ փաստաթղթերում կատարված փոփոխություններն և/կամ լրացումները Բանկը իր հայեցողությամբ հրապարակում է տեղեկատվության այնպիսի միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու այդ տեղեկություններին: Ըստ այդմ՝ Էլ Բանկը փոփոխությունների և/կամ լրացումների վերաբերելի տեղեկությունները հրապարակում է՝
- 9.3.1. Բանկի ինտերնետային կայքէջում, և(կամ)
- 9.3.2. Բանկի մասնաճյուղերում և Հաճախորդների սպասարկում իրականացնող այլ ստորաբաժանումներում առկա տեղեկատվական վահանակներում հայտարարությունների տեղադրման միջոցով, և(կամ)
- 9.3.3. Հաճախորդների էլեկտրոնային փոստային հասցեներով ուղարկելու միջոցով, և(կամ)

9.3.4. այլ միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս Հաճախորդին ստանալու և հավաստիանալու, որ տվյալ տեղեկությունները ստացել է Բանկից:

Բանկն իր բացառիկ հայեցողությամբ տեղեկությունները հրապարակում է վերոհիշյալ միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով: Պայմանները, Սակագներ և Դրույքների փոփոխություններն ուժի մեջ են մտնում Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջում www.evoca.am կայքում հրապարակելու օրվան հաջորդող 15-րդ (Տասնհինգ) օրը, եթե Բանկի կողմից հրապարակված համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելու այլ ժամկետ չի սահմանվում, ընդ որում, հրապարակման օր է համարվում Բանկի ինտերնետային կայքում դրանց տեղադրման ամսաթիվը: Հաճախորդը համաձայնում է, որ Բանկի ծառայություններից օգտվել շարունակելը (ներառյալ հաշիվները չփակելը առանց դրանցով գործառնություններ կատարելու) նշանակում է, որ փոփոխություններն ընդունվել են Հաճախորդի կողմից: Սույն կետով սահմանված միակողմանիորեն կատարվող փոփոխություններն ուժի մեջ մտնելու ժամկետի և սույն Պայմանների հետ միասին Հաճախորդի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մաս կազմող այլ փաստաթղթերով սահմանված միակողմանիորեն կատարվող փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետի միջև հակասություններ առաջանալու դեպքում գործում է սույն կետով սահմանված ժամկետը:

9.4. Բանկն իրավունք ունի իր նախաձեռնությամբ հարցում կատարել ցանկացած գումարների ծագման մասին, որոնք առկա են, կամ մուտքագրված են Հաճախորդի Բանկային հաշվին և կարող է պահանջել, որպեսզի Հաճախորդը Բանկին սահմանած ժամկետում ներկայացնի բավարար կամ գրավոր ապացույցներ գումարների ծագման օրինականության վերաբերյալ:

9.5. Հաճախորդը լիազորում է Բանկին, ձեռնարկել միջոցներ ի շահ Հաճախորդի կամ ոչ էական (թվաբանական սխալների, տառասխալների, բացթողումների և այլ վրիպակների ուղղում, Բանկային ծառայությունների անվանումների խմբագրումներ, ծառայությունների վճարների նվազեցում կամ վերացում և այլն) բոլոր փոփոխություններն ուժի մեջ դնելու համար՝ առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության կամ ստորագրության:

9.6. Բանկային ծառայությունների մատուցման միջնորդավճարները Հաճախորդի Բանկային հաշվից կարող են գանձվել յուրաքանչյուր գործարքի կատարմանն առնաթեր կամ ավարտից հետո:

9.7. Եթե որևէ գործառնություն իրականացնելու համար Բանկի կողմից սահմանված է փաստաթղթերի որոշակի օրինակելի ձև, ապա Բանկն իրավունք ունի չընդունել այդ ձևին չհամապատասխանող ցանկացած փաստաթուղթ և հրաժարվել գործառնության իրականացումից: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերում կամ հեռակառավարման համակարգերի միջոցով ներկայացված տեղեկությունների անճշտության համար:

9.8. Հաճախորդը պարտավորվում է 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում Բանկին հայտնել Հայտ/Դիմում-ի մեջ ներկայացված տվյալների փոփոխության վերաբերյալ, ինչպես նաև Բանկին ներկայացնել բոլոր այն փաստաթղթերը, որոնք հաստատում են Հաճախորդի անձնական տվյալների փոփոխությունները:

9.9. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բանկը սպասարկման որակի բարձրացման նպատակով իրավունք ունի իր գործունեության վայրում իրականացնել տեսադիտարկում, ձայնագրել, լուսանկարել կամ տեսագրել Հաճախորդի և Բանկի միջև հեռախոսային խոսակցությունները, Հաճախորդի այցելությունները և Բանկի տարածքում կատարվող գործառնությունների ընթացքը: Այդ ձայնագրությունները, լուսանկարներն ու տեսագրությունները պահվում են Բանկում և կարող են ծառայել որպես ապացույց՝ հնարավոր տարաձայնությունների լուծման համար:

9.10. Բանկն իրավունք ունի Հաճախորդի կողմից Դիմումի/Հայտի կամ Բանկ ներկայացվող այլ փաստաթղթերի մեջ նշված գրանցման, փաստացի բնակության, աշխատանքի վայրի և էլեկտրոնային փոստի հասցեներին (այդ թվում բջջային հեռախոսահամարներին) ուղարկել տեղեկատվական և գովազդային բնույթի հաղորդագրություններ՝ այդ թվում Հաճախորդի ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

- 9.11. ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՄԻ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՁՈՒՄ, ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԳՐԱՖԻԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՁՈՒՄ ՎԵՐՋԻՆԻՍ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ:
- 9.12. Բանկը պատասխանատվություն չի կրում իր հետ չկապված պատճառներով փոստի, կապի միջոցների, ինտերնետի աշխատանքի խափանման, ինչպես նաև դրա հետևանքով Հաճախորդի կողմից իր հաշիվների վերաբերյալ Բանկի ծանուցումները և հաշվետվությունների ստացման ուշացման համար:
- 9.13. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ուշ, թերի, ոչ հստակ, չստուգված կամ սխալ ներկայացված հրահանգների կատարման հետևանքով Հաճախորդի կրած վնասների և կորուստների համար:
- 9.14. Բանկը ազատվում է նյութական պատասխանատվությունից, որոնք կապված են իր վերահսկողությունից դուրս տեխնիկական խափանումների (էլեկտրամատուցման և կապի միջոցների անջատում/վնասում, Բանկի տվյալների շտեմարանի և պրոցեսինգային կենտրոնի ծրագրային ապահովումների խափանում, վճարային համակարգերի տեխնիկական ընդհատումներ և այլն) և այլ իրավիճակներում Բանկի կողմից Պայմանների կամ վերջինիս շրջանակներում կնքվող այլ պայմանագրերի դրույթների չկատարման կամ կատարման անհնարինության հետ:
- 9.15. Հաճախորդը համաձայն է, որ Բանկի հանդեպ պարտավորությունների առկայության կամ առաջացման, Հաճախորդի օգտին սխալմամբ կատարված փոխանցումների կամ Հաճախորդից սխալմամբ չգանձված այլ գումարների, ինչպես նաև հարկային պարտավորությունների առաջացման դեպքում Բանկն իրավունք ունի անակցեպատ կարգով կատարել այդ պարտավորությունների և Հաճախորդի Բանկային հաշվում առկա և/կամ ստացվելիք դրամական միջոցների հաշվանց:
- 9.16. Հաճախորդը տեղյակ է և համաձայն, որ իրավասու ատյանների կողմից պատժամիջոցների, սահմանափակումների, մասնակի պատժամիջոցների հրապարակման և կիրառման դեպքում Բանկը գործարքների /փոխանցվող/ստացվող գումարների/ սառեցման, կասեցման, հետ չվերադարձի հետ կապված պատասխանատվություն չի կրում, գործարքի ռիսկը կրում է Հաճախորդը: Հաճախորդը տեղյակ է և համաձայն, որ եթե գործարքի կատարման պահին դեռևս պատժամիջոց, սահմանափակում, մասնակի պատժամիջոց պաշտոնական հրապարակված չի եղել, սակայն ժամային գոտիների արդյունքում այն կիրառվել է և փոխանցված գումարը սառեցվել կամ կասեցվել է թղթակից բանկերի, կոնտրագենտների, շահառու բանկերի կողմից, ապա Բանկը նույնպես գործարքի /փոխանցվող/ստացվող գումարների/ սառեցման, կասեցման, հետ չվերադարձի հետ կապված պատասխանատվություն չի կրում:
- 9.17. Բանկը պատասխանատվություն չի կրում այն դեպքերում, երբ Հաճախորդի հաշիվների, քարտերի վերաբերյալ տվյալները (ներառյալ հաշվի անվանում, գաղտնաբառեր և այլ) հայտնի են դարձել երրորդ անձանց Հաճախորդի կողմից դրանց օգտագործման ընթացքում պատահաբար կամ միտումնավոր գաղտնալսման, ներխուժման կամ հափշտակման միջոցով:
- 9.18. Բանկը պատասխանատվություն չի կրում այն դեպքում, երբ Հաճախորդի իսկության ստուգման տվյալները և գաղտնաբառերը հայտնի են դառնում Հաճախորդի կողմից այդ տվյալների պահպանման և օգտագործման պայմանների խախտման հետևանքով:
- 9.19. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի հանձնարարականների կատարման հետևանքով Հաճախորդի կրած վնասների և կորուստների համար, եթե դրանք առաջացել են միջնորդ կազմակերպությունների գործողությունների կամ անգործության պատճառով:
- 9.20. Բանկը պատասխանատվություն չի կրում ոչ լիազոր անձանց կողմից ներկայացված հանձնարարականների կատարման համար այն դեպքերում, երբ Բանկային կանոններով և Պայմաններ

սահմանված գործընթացներով Բանկը հնարավորություն չի ունեցել պարզելու չլիազորված անձանց կողմից հանձնարարականներ տալու փաստը:

- 9.21. Բանկը պատասխանատվություն չի կրում Պայմաններով իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար այն դեպքում, երբ այդպիսի պարտավորությունների կատարումը դառնում է դժվար կամ անհնարին կամ էլ ձգձգվում է ֆորս մաժորային հանգամանքների և գործոնների ի հայտ գալով, որոնք առանց սահմանափակումների ներառում են Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ Կենտրոնական Բանկի կամ այլ պետությունների կենտրոնական Բանկերի կողմից որևէ օրենսդրական կամ այլ նորմատիվ ակտի ընդունումը, հրապարակումը կամ մեկնաբանության փոփոխությունը (այդ թվում արտարժույթի փոխարկման և փոխանցման սահմանափակումները), որոնց արդյունքում Բանկի կողմից իր պարտավորությունների կատարումը կարող է դառնալ անօրինական կամ ոչ իրավաչափ: Ֆորս մաժորային գործոնների թվին են դասվում նաև ահաբեկչական գործողությունները, դիվերսիաները, հրդեհները, ջրհեղեղները, պայթյունները, տարրերային աղետները, քաղաքացիական անկարգությունները, ցույցերը, փողոցային երթերը, ընդվզումները, անկարգությունները, պատերազմները, պետության գործողությունները (ռազմական դրության հայտարարում և այլն) և ցանկացած այլ իրավիճակներ, որոնք դուրս են Բանկի խելամիտ վերահսկողությունից: Կողմերի միջև գրավոր համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում, անհաղթահարելի ուժով պայմանավորված հանգամանք առաջանալու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել Պայմաններով նախատեսված իր պարտավորությունների կատարումը մինչև նշված հանգամանքի վերանալը:
- 9.22. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից Պայմանների դրույթների խախտման հետևանքով վերջինիս կողմից կրած վնասների համար:
- 9.23. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի սպասարկման ընթացքում ՀՀ օրենսդրական և այլ իրավական, ինչպես նաև դատական ակտերի պահանջների կատարման հետևանքով երրորդ անձանց կրած ուղղակի կամ անուղղակի վնասների համար:
- 9.24. Հաճախորդը պատասխանատվություն է կրում սույն Պայմանների, ինչպես նաև օրենսդրական և նորմատիվ ակտերի խախտման հետևանքով Բանկին պատճառված վնասի համար:
- 9.25. Բանկային գործառնությունների կատարման, և Բանկի հետ պատշաճ կապ հաստատելու նպատակով Հաճախորդը պարտավոր է Բանկին տրամադրել բոլոր անհրաժեշտ տվյալները, տեղեկությունները և փաստաթղթերը:
- 9.26. Բանկն իրավունք ունի Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերի իսկության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում դրանց իսկությունը պարզելու նպատակով իրականացնել լրացուցիչ միջոցառումներ, և Հաճախորդը սույնով համաձայնվում է, որ այս կապակցությամբ առաջացած ուշացումների հետևանքով իր կրած վնասների և կորուստների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:
- 9.27. Հաճախորդը հայտարարում է, որ իր կողմից Բանկին տրամադրված հասցեները, էլեկտրոնային փոստը, հեռախոսահամարը և կապի այլ միջոցները վերահսկվում են իր կողմից և դրանցով հնարավոր է կապ հաստատել իր հետ:
- 9.28. Արտարժույթով վարկային և ավանդային գործարքների դեպքում, Հաճախորդը գիտակցում և ընդունում է արտարժույթի փոխարժեքի փոփոխումից բխող հնարավոր անբարենպաստ հետևանքները և կրում է դրանց հետ կապված ռիսկերը:
- 9.29. Բանկն իրավունք ունի սույն Պայմաններից բխող իր իրավունքները փոխանցել կամ զիջել այլ անձանց՝ առանց Հաճախորդի նախնական համաձայնության:

	Համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմաններ	TRM17-0005-09 PUB Խմբագրություն: 15 Հաստատված՝ 21.04.2025թ.
--	--	--

- 9.30. Հաճախորդն իրավունք չունի սույն Պայմանագրից բխող իրավունքներն ու պարտականությունները զիջել կամ այլ կերպ փոխանցել այլ անձանց՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:
- 9.31. Սույն Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 9.32. Հաճախորդը հնարավորություն ունի սույն Պայմանագրից բխող իր բոլորները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին: Բանկը ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ կնքել է համաձայնագիր, որով հրաժարվել է 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող գույքային պահանջներով և 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող գործարքներով ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բանկի դեմ կայացած որոշումները վիճարկելու իրավունքից:
- 9.33. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից հարցում կատարվի «ԱԶՌԱ Զրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին՝ Հաճախորդի ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ ստանալու համար, որոնք Բանկի կողմից կարող են հաշվի առնվել Հաճախորդի հետ վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս:
- 9.34. Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը նաև, որպեսզի Բանկի կողմից վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու դեպքում տվյալ վարկային (փոխառության և այլն) պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահին առանց Հաճախորդին նախապես տեղյակ պահելու «ԱԶՌԱ Զրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն Բանկին տրամադրի Հաճախորդի ապագա ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ: Հաճախորդը գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել Բանկի կողմից կայացված համապատասխան որոշման վրա:
- 9.35. Բանկի կողմից սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքները չիրականացնելը չի կարող մեկնաբանվել որպես այդ իրավունքներից հրաժարում:
- 9.36. Հաճախորդի հանդեպ Բանկի պատասխանատվությունը սահմանափակվում է միայն փաստաթղթորեն հիմնավորված իրական վնասով, որն արդյունք է Բանկի աշխատակիցների դիտավորության կամ կոպիտ անզգուշության:
- 9.37. Բանկը կարող է հրապարակել սույն Պայմանագրի օտարալեզու թարգմանություններ: Թարգմանությունների և հայերեն օրինակների միջև հակասությունների դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:
- 9.38. Հաճախորդը համաձայն է, որ Բանկի հանդեպ իր ունեցած պարտավորությունների մարման նպատակով երրորդ անձինք կարող են Բանկին կատարել վճարումներ: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի պարտավորությունների մարմանն ուղղված երրորդ անձանց վճարումների արդյունքում Հաճախորդի և/կամ երրորդ անձանց կրած վնասների և կորուստների համար:
- 9.39. Սույն Պայմանագրերը կազմված են և մեկնաբանվում են համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Սույն Պայմանագրով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

ՀԱՐԳԵԼԻ ԱՎԱՆԴԱՏՈՒ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին:

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է **Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը** (այսուհետ՝ Հիմնադրամ):

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան 0010, Խորենացի 15, Էլիտ Պլազա բիզնես կենտրոն:

Հեռ.՝ (010) 58-35-14, Ինտերնետային կայքը՝ www.adgf.am

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելի ի վիճակի չլինելու փաստը կամ

2. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ Նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ Նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե Նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե Նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե Նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

«Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ Նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր

մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժույթային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,

զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Ավանդատուին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտային հարկի գումարը և այն փոխանցում պետական բյուջե:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.evoca.am կայքում, ինչպես նաև զանգահարելով Բանկի հետևյալ հեռախոսահամարով՝ 010 60 55 55:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության

քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԲՈՂՈՔ ՈՒՆԵՔ



1 ԾԱՆՈԹԱՑԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ

Կազմակերպության յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է.

- Ձեզ **ուղղորդել** բողոքների հարցով զբաղվող աշխատակցի մոտ:
- **Տրամադրել** հաղորդակցման համար անհրաժեշտ տվյալներ (հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե):

Պատասխանատու աշխատակիցը պարտավոր է.

- **Տեղեկացնել** Ձեր իրավունքների և բողոքի քննության գործընթացի մասին:
- **Տրամադրել** կազմակերպությունում գործող համապատասխան կանոնները և Հայտի ձև:



2 ԴԻՄԵՔ

Գրավոր բողոք ներկայացրեք պատասխանատու աշխատակցին կամ ուղարկեք հետևյալ հասցեներով.

 hello@evoca.am

 Ք.Երևան Հանրապետության 44/2

 «Viber», «Whatsapp» (+37499605555)

Ձեր բողոքը կարող եք ներկայացնել նաև Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

- **Նշեք** Ձեր տվյալները՝ պատասխանը ստանալու համար:

- **Հավաստիացեք**, որ Ձեր բողոքն ընդունել են և **պահպանեք** ստացման փաստը հավաստող տեղեկատվությունը մինչև բողոքի վերջնական լուծումը:



10 օր անց

3 ԾԱՆՈԹԱՑԵՔ
ՊԱՏԱՍԽԱՆԻՆ

Կազմակերպությունը բողոքի վերաբերյալ որոշում է կայացնում (բավարարել, մասնակի բավարարել, մերժել) 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հարցեր ունենալու դեպքում կապվեք պատասխանատուի հետ.

 (+374 10) 605555



Բավարարված չէք

4 ԴԻՄԵՔ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻՆ, Եթե.

- Ֆիզիկական անձ եք, միկրոձեռնարկատեր հանդիսացող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, այդ թվում նաև՝ երաշխավոր, գրավատու կամ այլ անձ ով ապահովման միջոցի (օրինակ՝ գրավի) հետ կապված բողոք ունի,
- բողոքը վերաբերում է մատուցվող ծառայությանը և ունեք գումարային պահանջ (մինչև 10 մլն դրամ), կամ բողոքը առնչվում է վարկային պատմությանը,
- 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չեք ստացել կամ պատասխանը Ձեզ չի բավարարում,
- բողոքը չի քննվում դատարանում կամ արբիտրաժային տրիբունալում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից,
- պատասխանից հետո չի անցել 6 ամիս,
- բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից հետո:

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼ

- Եթե Ձեր և կազմակերպության միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, ապա ձեր միջև ծագող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից:
- Պայմանագիր կքելիս Դուք իրավունք ունեք հրաժարվելու արբիտրաժային համաձայնագրից և կազմակերպությունը պարտավոր է Ձեզ ծառայություն մատուցել:
- Հիշեք. նույնիսկ արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, քանի դեռ բողոքը չի քննվել տրիբունալում:
- Հաշտարարը իրավասու չէ ընդունել բողոքը, եթե այն արդեն քննվում է տրիբունալում:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՎՃԱՐ ԵՆ

(Երևան 0010, Մ.Խորենացի 15, էլիտ պլազա բիզնես կենտրոն, 7-րդ հարկ, +374 60 701 111 info@fsm.am)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

- Դուք կարող եք նաև դիմել Կենտրոնական բանկ, և Ձեր բողոքին կպատասխանեն 15 աշխատանքային օրվա ընթացքում (Երևան 0010, Վ.Սարգսյան 6, +374 592 697, consumerinfo@cba.am):
- Եթե Ձեր բողոքը այլ կառույցների իրավասության դաշտում է, ապա Կենտրոնական բանկը կուղղորդի նրանց տիրույթ:
- Կենտրոնական բանկը խորհուրդ է տալիս Ձեր խնդրանքով նախևառաջ դիմել ֆինանսական կազմակերպությանը (Քայլ 2):

Հարցերի դեպքում դիմեք

(«Էվոկաբանկ» ՓԲԸ, ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 44/2, +374 10 605555, hello@evoca.am)

**ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ,
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ**

Տվյալների շրջանակը, որոնք մշակելու իրավասություն է տրվում «ԷՎՈԿԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Նաև՝ Բանկ, հասցե՝ 0010, ք. Երևան, Հանրապետության 44/2, պետական գրանցման վկայական թիվ՝ 0157, տրված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից, գրանցման համարը՝ 27, գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը՝ 02.10.1991թ., ՀՎՀՀ՝ 00001182)՝ անձի (հետագա տեքստում՝ «Հաճախորդ») կողմից սույն համաձայնությունը որևէ եղանակով (փաստաթղթային/էլեկտրոնային) հաստատելու դեպքում.

Ֆիզիկական անձի և անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի հաշիվների և քարտերի բացման և սպասարկման համար, ավանդների ներդրման, ներդրումային ծառայությունների ստացման և պահատուփերի վարձակալության համար, ինչպես նաև իրավաբանական անձ հաճախորդների համար հաշվի բացման ժամանակ գործադիր մարմնի ղեկավարի՝ որպես իրավաբանական անձի փոխկապակցված անձի անհրաժեշտ անձնական տվյալներ, անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձին վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ և այլ տեսակի վարկեր տրամադրելու գործընթացում, գրավատուների և ցանկացած տեսակի քաղաքացիաիրավական պայմանագրի կողմ հանդիսացող անձի տվյալներ.

1. Բանկի կողմից «ԷՎԵՆԳ» ՓԲԸ-ի միջոցով ստացվող անձնական տվյալների նկարագրություն

1.1. ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

- 1) ՀԾՀ հայտանիշ՝ Նորմալ վիճակ, հրաժարվել է
- 2) Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն)
- 3) Մահացած է/մահացած չէ
- 4) Մահվան ամսաթիվ
- 5) Ծննդյան ամսաթիվը
- 6) Սեռ
- 7) Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)
- 8) Զաղաքացիությունը
- 9) Անձը հաստատող փաստաթղթի տեսակ
- 10) Անձը հաստատող փաստաթղթի սերիա և համար, երբ և ում կողմից է տրվել
- 11) Անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետը
- 12) Հասցե (ՀՀ բնակության կող, ՀՀ բնակության մարզ, Համայնք, Բնակավայր, Փողոց, Տուն/Շենք հմ., Տան տեսակ, Բնակարան)
- 13) Լուսանկար

1.2. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

- 1) Կազմակերպության անվանում (հայերեն, անգլերեն)

- 2) Կազմակերպարավական տեսակ
- 3) Գրանցման համար
- 4) Գրանցման ամսաթիվ
- 5) ՀՀՀՀ
- 6) Ձեռնարկության կողային դասակարգիչ (ՁԿԴ)
- 7) Գործունեության տեսակ / ԱՁ-ի գործունեության խումբ
- 8) Պետական գրանցման վկայականի համար
- 9) Սոց. ապահովագրի կոդ
- 10) Հասցե (Երկիր, Մարզ, քաղաք/գյուղ, փողոց, շենք/տուն, բնակարան, Փոստային դասիչ)
- 11) Հեռախոսահամար
- 12) Տնօրենի կամ ԱՁ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ Անուն, Ազգանուն, Քաղաքացիություն, Անձնագրի համար, Երբ է տրվել, Ում կողմից, Վավեր է մինչև, ՀՀՀՀ, Հասցե (Երկիր, Մարզ, Համայնք, Քաղաք/Գյուղ, Փողոց, Տան տեսակ, Շենք/տուն/տնակ, Բնակարան, Փոստային դասիչ), Հեռախոսահամար
- 13) գործունեության տեսակի դասակարգչի կոդը,
- 14) բաժնեմասերի ընդհանուր քանակը,
- 15) բաժնեմասի արժեքը ՀՀ դրամով,
- 16) գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը,
- 17) գործադիր մարմնի ղեկավարի հեռախոսահամարը
- 18) գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային փոստի հասցեն,
- 19) սոցիալական ապահովագրի կոդ,
- 20) մասնակցի/բաժնետիրոջ մուտքի, ելքի ամսաթիվ,
- 21) կազմակերպության/անձի ID,
- 22) տեղեկություններ հիմնադիր լինելու մասին,
- 23) ձեռնարկության կոդ,
- 24) մասնաբաժինների քանակը,
- 25) տեղեկություն լուծարման մասին,
- 26) կազմակերպության ներկա քաղվածք, կազմակերպության կանոնադրություն

1.3. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

- 1) Աշխատավայրի ՀՀՀՀ
- 2) Աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները
- 3) Քաղաքացիարավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գումար
- 4) Եկամտային հարկի չափ
- 5) Անձի կողմից կատարված սոցիալական վճարումներ
- 6) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (ՀԿԴ) փոխանցված գումարի սոցիալական վճարի գումար

Աշխատած ժամերի քանակը

1.4. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ

1) Քրեական պատասխանատվության/դատվածության վերաբերյալ տեղեկատվություն

1.5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

- 1) Անուն, Ազգանուն, Հայրանուն
- 2) Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)
- 3) Անձը հաստատող փ/թ տեսակ՝
- 4) Անձը հաստատող փ/թ համար
- 5) Անձնագրի տրման ամսաթիվ

- 6) Անձնագիրը վավեր է մինչև**
- 7) Ում կողմից է տրված անձը հաստատող փ/թ**
- 8) Վիզայի համար, երբ է տրված, ում կողմից**
- 9) Ազգություն**
- 10) Ծննդյան ամսաթիվ**
- 11) Ծննդավայր, Ծննդյան հասցե (Մարզ, Համայնք, Երկիր, Մարզ, Համայնք, Փողոց, Տան տեսակ, Ծենք/տուն/տնակ, Բնակարան, Բնակվել է սկսված, Բնակվել է մինչև) • Գրանցման հասցե, Բնակության հասցե (Երկիր, Մարզ, Համայնք, Փողոց, Տան տեսակ, Ծենք/տուն/տնակ, Բնակարան, Բնակվել է սկսված, Բնակվել է մինչև, Գրանցման բաժանմունք)**
- 12) Սեռ՝ Արական, Իգական**
- 13) Մահվան մասին տեղեկություններ՝ Մահվան ամսաթիվ, Մահվան պատճառ Մահվան վայր, Տարիք, Նույնականացում, Հասցե, Մահը հաստատող անձ**
- 14) Քաղաքացիություն, Երկրորդ քաղաքացիություն**
- 15) Նոր ազգանուն**
- 16) Ազգանունը փոխելու պատճառ**
- 17) Ազգանունը ամուսնությունից առաջ**
- 18) Կրթություն**
- 19) Աշխատանք, զբաղմունք**
- 20) Զինծառայության վերաբերյալ տեղեկատվություն**
- 21) Ամուսնական կարգավիճակ**
- 22) Ամուսնության գրանցման ամսաթիվ, Ամուսնության գրանցման համար, Ամուսնությունը գրանցող բաժանմունք, Ամուսնության վկայականի համար**
- 23) Ամուսնալուծության պատճառ, Ամուսնալուծության գրանցման հիմք, Համատեղ երեխաների թիվը, Ամուսինների համատեղ դիմում, Խնամակալի տվյալներ**
- 24) Որերորդ ամուսնությունն է**
- 25) Ամուսնու/կնոջ վերաբերյալ տեղեկատվություն**
- 26) Ծնող է, թե ոչ**
- 27) Հայրության հիմք, Հայրության հիմքի մանրամասներ (Մոր հայտարարություն, Դիմումի ամսաթիվ, Դատարան, Վճռի համար, Վճռի ամսաթիվ)**
- 28) Երեխայի մասին տեղեկություններ, Քանի երեխա է ծնվել, Որերորդ երեխան է, Ծննդի կարգավիճակ, Երեխայի տվյալները հայրությունը ճանաչելուց հետո, Տեղեկություններ որդեգրումից հետո**
- 29) Ծնողների (հոր, մոր) վերաբերյալ տեղեկատվություն**
- 30) Քույրերի, եղբայրների վերաբերյալ տեղեկատվություն**

1.6. ՄԱՀԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

- 1) Անուն
- 2) Ազգանուն
- 3) ՀԾՀ
- 4) Մահվան ամսաթիվ
- 5) Ծննդյան ամսաթիվ
- 6) Տիպ

1.7. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1) Ավտոմեքենայի ունիկալ ID
- 2) Ավտոմեքենայի VIN համար

- 3)** Ավտոմեքենայի շարժիչի հզորություն/ձիաուժ
- 4)** Զաշը առանց բեռնվածության
- 5)** Ավտոմեքենայի գույն
- 6)** Փաստաթղթի համար
- 7)** Ավտոմեքենայի հաշվառման համարանիշի տեսք
- 8)** Ավտոմեքենայի թափքի տեսակ
- 9)** Ավտոմեքենայի կարգավիճակ՝ հաշվառված է, հանված է
- 10)** Սեփականության վկայականի համար
- 11)** Պետ. Հաշվառման վկայականի համար
- 12)** Ավտոմեքենայի տեսակի խումբ
- 13)** Ավտոմեքենայի մոդել
- 14)** Ավտոմեքենայի վառելիքի տեսակ
- 15)** Տարանցիկ համարանիշ
- 16)** Հատուկ նշումներ
- 17)** Ավտոմեքենայի հենասարքի համար
- 18)** Ավտոմեքենայի թողարկման տարեթիվ
- 19)** Ավտոմեքենայի տեսակ
- 20)** Ավտոմեքենայի տեսակ ID
- 21)** Առավելագույն թույլատրելի բեռնվածություն
- 22)** Ավտոմեքենայի հաշվառման ամսաթիվ
- 23)** ԱՏՄ շարժիչի համար
- 24)** Ժամանակավոր հաշվառման համար
- 25)** Դեղին հաշվառման համար
- 26)** Ավտոմեքենայի մակնիշ
- 27)** Ավտոմեքենայի մակնիշի տիպար
- 28)** Ավտոմեքենայի կարգավիճակ
- 29)** Կիրառված սահմանափակումներ
- 30)** Գրավադրման մասին տվյալներ (Անձի անուն, ազգանուն, հայրանուն, Անձի ՀԾՀ, Իրավաբանական անձի/ֆիզիկական անձ, Անձը հաստատող փաստաթղթի համար, Սեռ, Փաստաթղթի տեսակ, Անձի քաղաքացիություն, Անձի հասցեի նկարագիր, Գրավադրման ամսաթիվ, Գրավադրված գումարի չափ, Գրավադրված գումարի արտարժույթ, Գրավադրման վայր, Վերագրավադրման թույլտվություն)
- 31)** Հաշվառված անձի մասին տվյալներ (Անձի անուն, ազգանուն, հայրանուն, Անձի ՀԾՀ, Իրավաբանական անձի/ֆիզիկական անձ, Անձը հաստատող փաստաթղթի համար, Սեռ, Փաստաթղթի տեսակ, Անձի քաղաքացիություն, Ծննդյան ամսաթիվ, Անձի հասցեի նկարագիր)
- 32)** Սեփականատիրոջ մասին տվյալներ
- 33)** Ապահովագրման մասին տվյալներ
- 34)** Վարորդական իրավունք (ՎՎ համար, ՎՎ կարգեր, ՎՎ զրկված է և ապաստիվացված լինելու մասին տեղեկատվություն, Անձի անուն, ազգանուն, հայրանուն, Անձի ՀԾՀ, Անձը հաստատող փաստաթղթի համար, Սեռ, Անձի քաղաքացիություն, Ծննդյան ամսաթիվ, Անձի հասցեի նկարագիր)
- 35)** Անձի հասցեի նկարագիր (Պետություն, Մարզ, Համայնք, Զառնաք, Հասցե 1, Հասցե 2, Տան համար, Փողոց, Բնակարան, Փոստային դասիչ, Կազմակերպության հեռախոսահամար, Կազմակերպության, բջջ. հեռախոսահամար, Էլ. հասցե, Կայք, Հասցեն՝ ամբողջական տեսքով)
- 36)** ՃՈ խախտումների ցանկը ներառյալ Խախտման ամսաթիվ/Ժամ, Խախտման տեսակ, Պետ. համարանիշ, Որոշման համար, Որոշման հղում, Տուգանքի չափ, Վճարված գումար, Վճարման կարգավիճակ (ի լրումն նախկինում ստացված տվյալների)

1.8. ՀՀ ԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ

- 1) Ազգանուն, անուն, հայրանուն,
- 2) ՀԾՀ,
- 3) Անձը հաստատող փաստաթղթի համար
- 4) Իրավաբանական անձի ՀՎՀՀ
- 5) Վարույթի կողմ
- 6) Մուտքի ամսաթիվ
- 7) Հարուցման ամսաթիվ
- 8) Բնույթ
- 9) Բաշխման կարգ
- 10) Պարտապանի անուն/անվանում
- 11) Պարտապանի հասցե
- 12) Տոկոսի հաշվարկի հայտանիշ՝ առկա է, թե ոչ
- 13) Արգելադրող մարմին
- 14) Բռնագանձման գումարի չափ
- 15) Կատարված ծախսի գումարի չափ
- 16) Հայցի ապահովման գումարի չափ
- 17) Ալիմենտի գումարի չափ
- 18) Վարույթի մնացորդ
- 19) Դատարանի կողմ
- 20) Կատարողական թերթի ամսաթիվ

Բանկի կողմից «Նորը սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ»-ի միջոցով ստացվող անձնական տվյալների նկարագրություն

Ֆիզիկական անձանց վերաբերյալ.

- 1) Ազգանուն, անուն, հայրանուն
- 2) Գործող անձնագրի սերիա և համար, երբ և ում կողմից է տրվել
- 3) Ծննդյան օր, ամիս, տարի
- 4) Սեռ
- 5) ՀԾՀ
- 6) Գրանցման հասցեն Ըմարգ, համայնք, փողոց, շենք, բնակարան)
- 7) Տեղեկատվություն աշխատանքային գործունեության վերաբերյալ՝ նշելով կազմակերպության անվանումը, Կազմակերպության իրավաբանական հասցեն, հեռախոսահամարը, ՀՎՀՀ-ն, ընդունման և ազատման օր, ամիս, տարի, պաշտոն, ամսական աշխատավարձ

Իրավաբանական անձանց վերաբերյալ.

- 1) Իրավաբանական անձի անվանում
- 2) Իրավաբանական անձանց պետական գրանցման կողմ
- 3) Գրանցման ամսաթիվ
- 4) Գրանցման համար
- 5) Հիմնադրի կամ ԱԶ-ի անձնագիր
- 6) Կազմակերպության իրավաբանական հասցեն
- 7) Կազմակերպության հեռախոսահամար
- 8) Գործունեության տեսակ
- 9) Հիմնադրի կամ ԱԶ ազգանուն, անուն, հայրանուն
- 10) Ներկա վիճակը Ըգործող, լուծարված և այլն)
- 11) Աշխատողների քանակ

- 12) ԱԶ բնակության հասցե
- 13) ԱԶ գործունեության ժամկետ
- 14) ԱԶ գործունեության խումբ

Ստորագրելով կամ որևէ եղանակով հաստատելով սույն համաձայնությունը՝

Հաճախորդը տալիս է իր անվերապահ համաձայնությունը՝ մինչև իր՝ Բանկի հետ գործարար իրավահարաբերության մեջ մտնելը և այդ իրավահարաբերության ընթացքում (բացառությամբ պահպանումից) Հաճախորդի կողմից նշված ծառայությունից օգտվելու համար կամ անձի՝ որոշակի կարգավիճակով հանդես գալու համար անձին նույնականացնելու, որոշումներ ընդունելու, կարծիք ձևավորելու, իրավունքներ ձեռք բերելու կամ իրավունքներ կամ արտոնություններ տրամադրելու կամ իրավունքները սահմանափակելու կամ զրկելու նպատակներով (ընդ որում անձի վերաբերյալ տեղեկությունները Բանկը կարող է հավաքագրել իրավաչափ ցանկացած եղանակով, ինչպես անմիջապես իրենից, այնպես էլ՝ օրենքով չարգելված ցանկացած այլ աղբյուրներից) մշակել, այդ թվում՝ հավաքագրել, ամրագրել, մուտքագրել, համակարգել, կազմակերպել, պահպանել, վերափոխել, վերականգնել, փոխանցել (Բանկի հետ համագործակցության կամ քաղաքացիական այլ պայմանագրերի հիման վրա ծառայություններ մատուցող անձանց կամ կազմակերպություններին (այդ թվում օտարերկրյա), ՀՀ և օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններին, որոնք Բանկի հետ կնքել են գաղտնիության պահպանման համաձայնություններ կամ նման պարտավորություն ունեն օրենքի ուժով), ուղղել, ուղեփակել, ոչնչացնել, օգտագործել, ինչպես նաև՝ մեկից ավելի անգամ դիմել, կատարել հարցումներ ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, այդ թվում՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը, ՀՀ ոստիկանությանը, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությանը, ՀՀ հարկադիր կատարման ծառայությանը, ՀՀ կադաստրի կոմիտեին, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը, ՀՀ Կենտրոնական բանկին, ինչպես նաև՝ տվյալներ մշակող ցանկացած մարմին/անձի, այդ թվում՝ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մարմին/անձին, ստանալ, ինչպես նաև տրամադրել Հաճախորդի վերաբերյալ անհրաժեշտ (այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված և պաշտպանվող) վերոշարադրյալ տվյալները:

Հաճախորդը հավաստում է, որ տեղեկացված է և գիտակցում է, որ տվյալները կարող են տրամադրվել Բանկի աշխատակիցներին, ովքեր իրավասու են զբաղվելու տվյալների մշակմամբ:

Հաճախորդը սույնով ընդունում է, որ իր հետ իրավահարաբերության դադարեցումից հետո անձնական տվյալների մշակումը դադարում է, բացառությամբ պահպանման, ընդ որում՝ այդ նպատակով Հաճախորդի անձնական տվյալները գաղտնագրվում են, և սահմանափակվում է բոլոր անձանց հասանելիությունը այդ տվյալներին (տվյալները կարող են հասանելի դառնալ միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում): Այդ տեսքով տվյալները պահպանվում են 70 տարի ժամկետով:

Հաճախորդը հաստատում է, որ տեղեկացված է, որ կարող է ցանկացած ժամանակ ծանոթանալ իր անձնական տվյալներին, պահանջել դրանց ուղղում կամ ոչնչացում, եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար:

Հաճախորդը հաստատում է, որ տեղեկացված է, որ ցանկացած ժամանակ կարող է հետ կանչել սույն համաձայնությունը՝ դիմելով Բանկին գրավոր՝ հաստատված ստորագրությամբ կամ էլեկտրոնային եղանակով հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի դեպքում Բանկը պետք է դադարեցնի Հաճախորդի հետ գործարար հարաբերությունները, ինչը ենթադրում է Բանկի նկատմամբ առկա բոլոր պարտավորությունների կատարում, որից հետո Բանկը պարտավոր է դադարեցնել անձնական տվյալներ մշակելը և ոչնչացնել տվյալները՝ հետկանչն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը պարտավոր է ոչնչացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել անձին անձնական տվյալները ոչնչացնելու մասին: Ընդ որում, ոչնչացումը կատարվում է վերոնշյալ 4-րդ կետով սահմանված կարգով:

Հաճախորդը հավաստում է, որ կարդացել է սույն համաձայնությունը և հավաստում է, որ համաձայնության տեքստն իր համար ամբողջությամբ հասկանալի, ընկալելի և ընդունելի է: